


ԱՐՏԱԿ ՏՈՆԻԿՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿԶԱԼԵՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ ՏՈՆԻԿՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, ԵՐԵՎԱՆ, 1962

Խմբագիր՝ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

АРТАК АСАТУРОВИЧ ТОНИКЯН
МАРТИН МАЗМАНЯН
(жизнь и деятельность)
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1962

Սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման գործում իր արժանի տեղն ունի Մարտին Սերգեյի Մազմանյանը։

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից մինչև այժմ նա հանդես է եկել որպես կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժիշտ-հասարակական գործիչ. միշտ բարձր է պահել սովետական արվեստագետի կոչումը՝ իր ամբողջ եռանդն ու ուժը նվիրելով աշխատավոր ժողովրդի երաժշտական դաստիարակության կարևոր գործին։

Մ. Մազմանյանը ծնվել է 1899 թվականի դեկտեմբերի 24-ին (հին տոմարով) Թիֆլիսում, Հավլաբարի թաղամասում։ Նա իր առաջին երաժշտական տպավորությունները ստացել է ժողովրդական տոնակատարություններից ու հանդեսներից, որոնց ակտիվ մասնակցություն էին ունենում ինք-

նուա երդիչները, ժողովրդական գործիքների վրա վարպետ կատարողները և անտամբլները։ Թիֆլիսի այդ թաղամասում ընդունված էր ընտանեկան տոնախմբություններն ու հարսանիքներն անցկացնել քացօթյա։ Լուսադեմին խնջույքի սեղանը փոխադրվում էր փողոց, երաժշտախումբը՝ զուռնաչիների եռյակը, նվագում էր իր ավանդական սահաբրին, որից հետո սկսվում էր երգն ու պարը։ Հընչում էին ժողովրդական, գուսանական երգերն ու պարեղանակները։ Քեֆ անողների շուրջը հավաքվում էին հարևանները, թաղի երեխաները, երիտասարդները։ Հասրա եկեղեցական տոնե՞րը, ուխտավորների հավաքույթնե՞րը Խոջիվանքի բակում, որն իր ընդարձակ գերեզմանոցով գտնվում էր Մազմանյանների տան դիմաց։ Հենց այդ տան շրջապատը հարուստ էր Թիֆլիսին հատուկ ճաշարաններով, որտեղ երգ ու նվագի տակ քեֆ էին անում թիֆլիսեցի լոթիները։ Էլ չեմ ասում այդ թաղերի շրջիկ երաժիշտների ու գուսանների մասին, որոնք այցելելով բակերը ցուցադրում էին իրենց արվեստը։

Փոքրիկ Մարտինը իր ընկերների հետ այդ բոլորի ակտիվ ունկնդիրն էր և լսածի ու տեսածի ուժեղ տպավորության տակ իր խաղերում աշխատում էր ընդօրինակել այս կամ այն երգչին ու գուսանին, կատարել նրանցից լսած ու հավանած երգն ու եղանակը։

Մ. Մազմանյանը տարրական կրթությունը ստանում է Թիֆլիսի Ս. Գևորգի ծխական դպրոցում։ 1905 թվականի հեղափոխական շարժումների հետևանքով Թիֆլիսում վերաբացվել էին հայկական դպրոցները։ Այստեղ որպես երաժշտության դասատուներ աշխատանքի էին անցել մի խումբ էնտուզիաստ կոմպոզիտորներ՝ Ա. Մանուկյանը, Միք. Միրզոյանը, Հ. Հովհաննիսյանը, Դ. Ղազարյանը, Ե. Սարդարյանը և ուրիշներ։ Այդ շրջանում է ահա, որ Թիֆլիս է գալիս երիտասարդ Ռ. Մելիքյանը և նույնպես լծվում մանուկ սերընդի երաժշտական կրթության գործին։ Կազմակերպվում է «Երաժշտական լիգա» ընկերությունը, որի նպատակն էր դպրոցներում երգ-երաժշտությունը դարձնել պարտադիր առարկա, վերակառուցել երգ-երաժշտության դասավանդումը, գրել նոր երգեր մանուկների համար, հրատարակել դասագրքեր, երգարաններ, դպրոցներում կազմակերպել երգեցիկ խմբեր։

«Երաժշտական լիգա» ընկերության գործունեությունն ունեցավ իր դրական արդյունքը։ Գրվում են դպրոցական նոր երգեր, մանկական օպերաներ, երաժշտական պատկերներ, որոնք աշակերտների ուժերով կատարվում են հանդեսներին, լույս են տեսնում երգարաններ, երաժշտական գրագիտության ձեռնարկներ։ Այս ամենը մեծ չափով աշխուժացնում է դպրոցներում երգ-երաժշտ-

տության դաստիարակումը, մեծ հետաքրքրություն և սեր առաջացնում երեխաների մեջ՝ դեպի երաժշտությունը։

Ս. Գևորգի դպրոցում, որտեղ սովորում էր Մ. Մազմանյանը, այդ տարիներին երաժշտության դասատու էր Բուղդան Բերինյանը։ Ներսիսյան դպրոցում նա աշակերտել էր նշանավոր հայ կոմպոզիտոր Մակար Եկմալյանին։

Բ. Բերինյանի դասերն անցնում էին շատ աշխույժ, երեխաները սիրում էին նրան, մանավանդ, որ նա ուներ հաճելի և հստակ ձայն (լիրիկական տենոր). նրա կատարումը ուժեղ տպավորություն էր թողնում ունկնդիրների վրա։ Նա դպրոցում ստեղծել էր երկձայն երգչախումբ, որը հաճախ հանդես էր գալիս աշակերտական երեկոներին։ Դպրոցական այդ խումբը պատարագի ժամանակ երգում էր եկեղեցում։ Բ. Բերինյանն իր երգեցիկ խմբին սովորեցրել էր Մ. Եկմալյանի «Պատարագի» առաջին և երկրորդ ձայները, իսկ տոնական օրերի համար հրավիրում էր լավ ձայն ունեցող իր ընկերներին, որոնք նրա հետ միասին խմբում երգում էին տենորի և բասի պարտիաները։ Այսպիսով, Մ. Մազմանյանը քառաձայն երգեցիկ խմբի հետ ծանոթանում է տակավին ծխական դպրոցի աշակերտ եղած տարիներին։

Դպրոցում Մ. Մազմանյանն աչքի էր ընկնում իր դուրեկան ձայնով ու երաժշտական ակնառու

ընդունակություններով։ Արագությամբ յուրացնում էր երգերը, երգում էր գեղեցիկ։ Նա արդեն գրավել էր դասատուի ուշադրությունը։ Ապա նա ելույթներ էր ունենում աշակերտական հանդիսաներին, կատարելով սովորած երգերը։ Մի քանի անգամ ղեկավարում է նույնիսկ երգեցիկ խումբը։ Այս շրջանից, ահա, Մ. Մազմանյանը չերմ. սիրով կապվում է երգեցիկ խմբերի հետ, նվիրվում խմբավարական արվեստին։

Կոմպոզիտոր Գուրգեն Միրզոյանի և «Շունն ու կատուն» մանկական օպերայի հեղինակ Սարգիս Մուրադյանի նախաձեռնությամբ Թիֆլիսի զանազան դպրոցներից հավաքվել էին մի խումբ լավ ձայն ունեցող աշակերտներ, որոնք պատրաստելով վերոհիշյալ օպերան, մեծ հաջողությամբ բեմադրում են քաղաքի աշակերտության համար։ Այդ խմբի մեջ է ներգրավվում նաև Մ. Մազմանյանը, որին հանձնարարվում է 3-րդ աշակերտի դերը։

Օպերան բեմադրվել էր նվագախմբի նվագակցությամբ, որի դիրիժորն էր կոմպոզիտոր Գուրգեն Միրզոյանը։

Միևական դպրոցն ավարտելուց հետո Մ. Մազմանյանն ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որտեղ երգի ու երաժշտության դասավանդումը դրված էր բարձր մակարդակի վրա։ Բավական է ասել, որ ընդունելության քննություններին

երգ-երաժշտությունը պարտադիր առարկա էր հաստատվում։ Այստեղ երգ-երաժշտությունն ավանդում էր կոմպոզիտոր Սպ. Մելիքյանը։

Դպրոցական ծրագրով երգ-երաժշտությունը դասավանդվում էր մինչև բարձր դասարանները և դա էր պատճառը, որ երաժշտության դասերին աշակերտները վարժ կատարում էին սոլֆեջիոյի միաձայն և երկձայն վարժություններ, լավ գիտեին երաժշտության տարրական տեսությունը։ Նրանց համար հաճախ կազմակերպում էին օպերաների կոլեկտիվ դիտումներ, համերգների ունկընդրումներ՝ նախապես տանելով բացատրական աշխատանք։

Այդպիսի մի կոլեկտիվ դիտումների ժամանակ Մ. Մազմանյանին իր ընկերների հետ հաջողվում է առաջին անգամ լինել օպերայի թատրոնում։ Նրանք դիտում են ռուսական երաժշտության կլասիկ Մ. Ի. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերան, որը նրանց արդեն ծանոթ էր դպրոցից։

Ուշադիր հետևելով ներկայացմանը, որքան մեծ է լինում նրանց ուրախությունը, երբ երգեցիկ խմբի կատարմամբ լսում են «Փառաբանվիր» հիանալի խմբերգը, որը նրանք սովորել էին դպրոցական երգեցիկ խմբի պարապմունքներին։

«Իվան Սուսանին» օպերայի ներկայացումը ուժեղ տպավորություն է թողնում Մ. Մազմանյա-

նի վրա, որից հետո նա դառնում է Օպերային թատրոնի ակտիվ հանդիսատեսը։

Սպ. Մելիքյանը Ներսիսյան դպրոցի իր խմբով ամեն տարի մի քանի անգամ համերգ էր տալիս Թիֆլիսի երաժշտասեր հասարակության համար, մեծ մասամբ կոնսերվատորիայի դահլիճում։ Այդ համերգների ծրագրերում տեղ էին գտնում ինչպես հայ կոմպոզիտորները, այնպես էլ ռուսական ու արևմտաեվրոպական կլասիկների լավագույն գործերը։ Սպ. Մելիքյանը շատ էր սիրում ու բարձր էր գնահատում իր ուսուցչին՝ Կոմիտասին, և մեծ սիրով պատրաստում ու կատարում էր նրա երկերը։ Թիֆլիսում նա հանդիսանում էր Կոմիտասի ստեղծագործությունների լավագույն պրոպագանդիստը։ Լինելով Կոմիտասի անմիջական աշակերտը նա ամենայն հարազատությամբ և բարձր ճաշակով էր ցուցադրում ուսուցչի անզուգական ստեղծագործությունները։

Իրենց երաժշտական ունակություններով և լավ ձայնով Ներսիսյան դպրոցի աշակերտության սիրելիներն էին Շարա Տալյանը, Կարո Զաքարյանը, Գարեգին Գարդիշյանը, Կարո Հալաբյանը, Արմենակ Տեր-Աբրահամյանը, Լևոն Խաչատրյանը, Մարտին Մազմանյանը և ուրիշներ։

Նրանց մեծագույն մասը դարձան հայ ժողովրդի երաժշտական կուլտուրայի նշանավոր գործիչներ։

Մ. Մազմանյանը հենց ընդունելության քննությունների ժամանակ գրավում է Սպ. Մելիքյանի ուշադրությունը։ Նրան անմիջապես ընդունում են դպրոցի երգեցիկ խմբում, ուր երգում է մինչև դպրոցն ավարտելը՝ սկզբում որպես դիսկանտ, հետո այլտ և բարձր դասարաններում՝ որպես բաս։

Նկատելով Մ. Մազմանյանի երաժշտական ընդունակությունները ու անսահման նվիրվածությունը աշխատանքին, Սպ. Մելիքյանը խորհուրդ է տալիս նրան զբաղվել երաժշտությամբ, օգնում է, որ նա մասնագիտական դասեր վերցնի դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանից, որը հայ երաժըշտական կուլտուրայի անխոնջ մշակներից մեկն էր։ Նա եղել է Թիֆլիսի հայ երաժշտական ընկերության նախագահի տեղակալ և իր համերգներով ու ելույթներով մեծ չափով նպաստել է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածմանը։

Թիֆլիսում Մ. Մազմանյանն աշակերտում է նաև երաժշտագետ Օվսաննա Տեր-Գրիգորյանին։ Վերջինս Մ. Մազմանյանի հետ, բացի դաշնամուրի դասերից, պարապել է նաև տեսություն, սոլֆեջիո, օգնել է երաժշտական շարադրանքին։

Այս պարապմունքները և շփումը մասնագետ նոր դասատուների ու երաժշտական գործիչների հետ Մ. Մազմանյանին ավելի են ոգևորում։ Ներսիսյան դպրոցի երգչախմբից բացի նա մասնակցում է

Թիֆլիսում նոր կազմակերպված երգչախմբային ընկերության խմբի գործունեությանը։ Այդ խմբում ընդգրկվել էին Ներսիսյան, Հովնանյան և Գայանյան դպրոցների երգչախմբերի լավագույն երգիչ-երգչուհիները։ Խումբը ղեկավարում էր դարձյալ Սպ. Մելիքյանը։

Սպ. Մելիքյանի աչքից չի վրիպում խմբավարական արվեստի ասպարեզում իր աշակերտների ունեցած ձիրքը. նա աջակցում է նրանց՝ փորձառություն ձեռք բերելու այդ բնագավառում։ Եվ, ահա, դպրոցական հանդեսներին երգեցիկ խումբը ղեկավարելու բախտին են արժանանում մի քանի շնորհալի աշակերտներ, որոնց թվում և Մ. Մազմանյանը։

Ներսիսյան դպրոցի և երգչախմբային ընկերության երգեցիկ խմբի փորձերին Սպ. Մելիքյանը հրավիրում էր իր երաժիշտ ընկերներին, գրողներին, արվեստագետներին և ցուցադրում խմբի աշխատանքը։ Այդ այցելությունները ոգևորում էին խմբի անդամներին, և փորձերն անցնում էին ջերմ մթնոլորտում։ Խումբը երգում էր ոգևորությամբ, պայծառ տրամադրությամբ, միշտ արժանանալով հյուրերի բարձր գնահատականին։

Ահա այդպիսի մի հետաքրքիր իրադարձություն էր Ալ. Սպենդիարյանի այցելությունը Ներսիսյան դպրոց, որտեղ Մ. Մազմանյանն առաջին անգամ տեսնում է հայ անվանի կոմպոզիտորին։

Ալ. Սպենդիարյանը 1916 թվականին Թիֆլիս էր եկել մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ հանդիպելու նպատակով։ Սպ. Մելիքյանը Ա. Սպենդիարյանին հրավիրում է Ներսիսյան դպրոց՝ հայ ժողովրդական և խմբական երգերի հետ նրան ծանոթացնելու համար։ Խումբը երկար ժամանակ պատրաստվում էր այդ հանդիպմանը, փորձերը կրկնապատկվում են, կրկնվում է անցածը, պատրաստվում են նոր երգեր՝ թանկագին հյուրին արժանավայել կերպով դիմավորելու նպատակով։

«... եկավ Ալ. Սպենդիարյանը Սպ. Մելիքյանի ուղեկցությամբ,— պատմում է Մ. Մաղմանյանը։—Մենք բոլորս ոտքի կանգնեցինք և սկսեցինք ծափահարել նրան։ Մեր ուսուցիչը մեզ նախօրոք պատմել էր Սպենդիարյանի մասին, մենք արդեն գիտեինք, որ նա նշանավոր և մեծ կոմպոզիտոր է։ Երգեցիկ խումբը Սպ. Մելիքյանի ղեկավարությամբ ցուցադրեց Կոմիտասի, իրեն՝ Սպ. Մելիքյանի և ուրիշների մի շարք երգերը, այնուհետև Ալեքսանդր Աֆանասևիչի ցանկությամբ մենք կատարեցինք հատվածներ Մ. Եկմալյանի քառաձայն «Պատարագից»։ Նա մեծ տպավորություն էր ստացել խմբի կատարումից և թե այն բոլոր ստեղծագործություններից, որ լսել էր ինքը։ Ալեքսանդր Աֆանասևիչը իր հուշատետրում նշումներ էր անում։ Հետագայում մեր ցուցադրած երգերից մի քանիսը նա մեծ վարպետությամբ և ճաշակով

մշակման հնթարկելուց հետո օգտագործել էր «Ալմաստ» օպերայում։ Ալեքսանդր Աֆանասևիչին հրաժեշտ տալուց առաջ Սպ. Մելիքյանը շնորհակալություն հայտնեց մեծ երաժշտագետին մեղ՝ այցելելու և ուշադիր ունկնդրելու համար և խնդրեց լսել մի երգ ևս։ Ալ. Սպենդիարյանը հաճույքով համաձայնեց, և մենք կատարեցինք երգեցիկ խմբի համար նրա գրած լավագույն երգերից մեկը՝ «Կարիճ մարտիկները» («Разудалые бойцы»), որը մենք սովորել էինք հատկապես նրա գալու առթիվ։ Այդ առնական երգը ոգեշնչել էր մեզ։ Երգեցիկ խմբի ծափերի տարափի տակ Սպենդիարյանը գրկախառնվեց մեր սիրելի ուսուցչի հետ»։

Սպ. Մելիքյանի աշխատանքը Ներսիսյան դպրոցում չսահմանափակվեց երգ-երաժշտության դասատուի պաշտոնով։ Կենտրոնացնելով իր ուշադրությունը երգչախմբային ընկերության և Ներսիսյան դպրոցի երգեցիկ խմբերի վրա, նա մեծ դեր կատարեց հայ երաժշտական կուլտուրայի զարգացման, հայ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունների ժողովրդականացման գործում։ Նա իր երգեցիկ խմբով ակտիվ մասնակցություն է ունենում Թիֆլիսի հայ կուլտուրական կյանքին։ Խմբակային երաժշտության համերգներով նա ժողովրդին ընծայաբերեց ազգային երաժշտության գոհարները, միշտ հիացմունք պատճառելով ունկնդիրներին։

Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Թիֆլիսում կազմակերպվում է Հայ արվեստի տունը («Հայարտուն»), որի երաժշտական սեկցիայի ղեկավարն էր Ռ. Մելիքյանը։ Մ. Մազմանյանը ծանոթանում է Ռ. Մելիքյանի հետ և ակտիվ մասնակցում սեկցիայի աշխատանքներին։

Ահա, երաժշտական այսպիսի հետաքրքիր և հարուստ միջավայրում աճեց Մ. Մազմանյանը, վերջնականապես որոշելով իր ուղին կյանքում։

***

1921 թվականի աշնանը Թիֆլիս է գալիս Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ռեժիսոր Սուրեն Իլյիչ Խաչատրյանը՝ հավաքագրելու երիտասարդ դերասանների և արվեստագետների՝ Մոսկվայում Հայաստանի Կուլտուրայի տան կից դրամատիկ ստուդիան համալրելու նպատակով։

Երիտասարդ դերասանների հետ այդ կազմում ընդգրկվում են նաև երաժիշտներ և նկարիչներ։

Արմեն Գուլակյանի, Տիգրան Շամիրխանյանի, Սուրեն Քոչարյանի, Միքայել Մազմանյանի, Վևոն Խաչատրյանի, Արամ Խաչատրյանի և ուրիշների հետ Մ. Մազմանյանը ևս մեկնում է Մոսկվա։

Այդ տարիներին Թիֆլիսի և Մոսկվայի միջև երկաթուղային կապը շատ անկանոն էր։ Նույնիսկ կիսակայարաններում գնացքները ժամերով կանգ

էին առնում, մեծ կայարաններում՝ երբեմն օրերով։ Մեր կուլտուրայի ապագա գործիչները, տեղավորվելով ապրանքատար վագոնների տախտամածի վրա, ուղևորվում են Մոսկվա։

Երկարատև ճանապարհորդության ընթացքում երիտասարդ ուղևորները շատ են մտերմանում։ Ամբողջ ճանապարհին իրար կողքի պառկած զրուցում են միմյանց հետ, ծրագրում անելիքները, երազում իրենց ապագայի մասին։

Երիտասարդ ճանապարհորդները, որտեղ կանգառը երկար էր տևում, նույնիսկ օրեր, կայարանային ակումբներում կազմակերպում էին ինքնագործունեության երեկոներ. ելույթ էին ունենում համարյա բոլորը։ Մեկը արտասանում էր, մյուսը՝ երգում. խմբական երգեցողությունը ղեկավարում էր Մ. Մազմանյանը։ Երկաթուղայիններր մեծ հաճույքով ունկնդրում էին երիտասարդ արտիստներին, և հետո շնորհակալությամբ ճանապարհ դնում նրանց։

Ադրբեջանի Բալաջարի կայարանում տեղի է ունենում ստուդիականների և հայ նշանավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի հանդիպումը։ Սովետական Հայաստանի կառավարության հրավերով նա իր ընտանիքով, նույնպիսի ապրանքատար վագոնով, փոխադրվում էր Երևան։

Մ. Սարյանը բազմաթիվ հարցեր է տալիս Հայաստանի մասին և ինքն էլ իր խելացի ու գործնա-


կան խորհուրդներով երիտասարդներին բարի ճանապարհ է մաղթում դեպի Մոսկվա։

Ռոստովում գնացքը մնում է երկու օր։ Երիտասարդները այցելում են քաղաքի տեսարժան վայրերը։ Որքան մեծ է լինում նրանց ուրախությունը, երբ քաղաքային թանգարանում տեսնում են Մ. Սարյանի գործերը։ Քսաննվորս օրվա երկարատև ճանապարհորդությունից հետո նրանք հասնում են իրենց երազած քաղաքը՝ Մոսկվա։

Դա քսանական թվականների սկիզբներին էր։ Խիզախումներ արվեստի և գրականության բնագավառում։ Հետաքրքիր համերգներ, ներկայացումներ, դասախոսություններ և դիսպուտներ ժամանակակից արվեստի շուրջը, մասսայական միջոցառումներ։

Մոսկվայի Հայաստանի Կուլտուրայի տան շուրջը համախմբվել էին տարբեր ասպիններով Հայաստանից եկած արվեստագետներ, գրականագետներ՝ մեծ մասամբ ուսանելու, կատարելագործվելու, որոնք բացի Կուլտուրայի տանը կազմակերպված հետաքրքիր հավաքույթներից հաճախում էին արվեստի և գրականության բնագավառի տարբեր միջոցառումներին։

Մ. Մազմանյանն իր երաժիշտ ընկերների հետ սիստեմատիկ կերպով հաճախում է Մոսկվայի Մեծ թատրոնի ներկայացումներին, որին մասնակցում էին վոկալ արվեստի անվանի վարպետները, Մոսկ-



Մարտին Մազմանյանը և Արմեն Գալոկյանը Մոսկվայում ուսանողական տարիներին, 1922 թ.

վայի գեղարվեստական թատրոնի, Մեյերխոլդի թատրոնի ներկայացումներին, ժամանակակից երաժշտության ասոցիացիայի կողմից կազմակերպված սիմֆոնիկ համերգներին, որը ղեկավարում էր պրոֆ. Կ. Սարաջևը, Պերսիմֆանսի (առաջին սիմֆոնիկ անսամբլ առանց դիրիժորի) ակադեմիկ կապելլայի, Պյատնիցկու անվան ռուսական ժողովրդական երգի անսամբլի համերգներին և այլն։

Այդ տարիներին արտասահմանից համերգների էին եկել անվանի կատարողներ, որոնց թվում դաշնակահար Էգոն Պետրին, ջութակահար Ժոզեֆ Սիգետին, դիրիժոր Օտտո Կլեմպերերը և ռուս անվանի երգիչ Ֆյոդոր Շալյապինը։ Վերջինիս տված համերգներից մեկին Մ. Մազմանյանին հաջողվել է լինել Եղիշե Չարենցի հետ. Շալյապինին լսելուց հետո, նրանք երկար ժամանակ մնում են այդ տպավորության տակ։

Մ. Մազմանյանն ընդունվում է Մոսկվայի խմբավարական ակադեմիան (նախկին Սինոդալ ուսումնարանը)։

Այդ ուսումնական հաստատությունը փակվելու հետևանքով նա անցնում է Մոսկվայի կոնսերվատորիայի հոբոյի դասարանը։ Կոնսերվատորիայում Մ. Մազմանյանի դասատուները եղել են պրոֆեսորներ՝ Գ. Ս. Գեկը (հոբոյի), Կ. Ս. Սարաջևը

(սոլֆեջիո), Ա. Վ. Ալեքսանդրովը (հարմոնիա) և ուրիշներ։

Մոսկվայում Հայաստանի Կուլտուրայի տան կից կազմակերպված դրամատիկ ստուդիայից բացի (ստուդիայի վեկավար՝ Ս. Ի. Խաչատրյան, իսկ հետագայում՝ Ռ. Ն. Սիմոնով) կազմակերպվում է նաև երաժշտական խմբակ, որտեղ ընդգրկվում են Մոսկվայի երաժշտական ուսումնական հաստատությունները սովորող հայ ուսանողները և երաժշտության բնագավառում աշխատող երաժիշտ ընկերները՝ թվով քառասուն մարդ։ Երաժշտական խմբակի ակտիվ անդամներից էին՝ Գ. Բուդաղյանը, Ա. Գաբրիելյանը, Գեղարիկը (Գագիկ Տեր-Գաբրիելյան), Ս. Ասլամազյանը, Լ. Օհանջանյանը, Լ. Խաչատրյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Կասպարբեկը և ուրիշներ։ Երաժշտական խմբակի նախագահն էր Գ. Բուդաղյանը, իսկ հետագայում՝ Մ. Մազմանյանը (մինչև 1925 թվականը)։

Խմբակի պատվավոր անդամներն էին Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Սպ. Մելիքյանը, Ս. Բարխուդարյանը և Կ. Սարաջևը։

Խմբակը նպատակ էր դրել համախմբել Մոսկվայում գտնվող հայ երաժիշտներին, զբաղվել նրանց ընդհանուր երաժշտական կրթությամբ, ժողովրդականացնել հայ երաժշտության լավագույն նմուշները, կապ պահպանել Հայաստանի երաժշտական աշխարհի հետ և աջակցել երիտասարդ

ռեսպուբլիկայի երաժշտական կուլտուրայի զարգացմանը։

Խմբակին կից ստեղծվում է հրատարակչական կոլեգիա, որի նախագահ է ընտրվում Մ. Մազմանյանը։ Կոլեգիան ծրագրում է տպագրել հայ կոմպոզիտորների անտիպ երկերը։ Լույս է տեսնում «Կյանք և երաժշտություն» ամսագիրը (խմբագիր՝ Ա. Տոնիկյան)։ Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանողներ Ա. Գաբրիելյանի, Լ. Օհանջանյանի, Մ. Տերյանի և Ս. Ասլամազյանի ջանքերով կազմակերպվում է լարային կվարտետ, որը հետագայում ստանում է անմահ Կոմիտասի անունը (Կոմիտասի անվան պետական կվարտետ)։

Նույն խմբակը նախաձեռնում և ստեղծում է երգեցիկ խումբ, որի կազմի մեջ հավաքագրվում են երաժշտական ուսումնական հաստատությունների ուսանողները, ձայնական տվյալներով օժտված երիտասարդներ՝ թվով վաթսուն երգիչ։

Երգեցիկ խմբի ղեկավարությունը հանձնարարվում է Մ. Մազմանյանին։ Որպես խմբավար նա հանդես էր գալու առաջին անգամ։ Կոմիտասն էր նրա երաժշտական երդպանը։ Մոտենում է անդրանիկ համերգի օրը՝ 1924 թվականի հունվարի 14-ը։ Լեփ-լեցուն դահլիճում խումբը կատարում է Կոմիտասի «Անձրևն եկավ», «Սարերի վրով գնաց», «Էս գիշեր լուսը տեսա», «Շորորա անուշ», «Լուսնակն անուշ», «Առավոտյան բարի լույս»,

«Կուժն առա», «Գնա-գնա», «Խումար պատկե», «Հոլ արա, եզո», «Գարուն ա», «Իմ չինարի յարը» ստեղծագործություններ։ Համերգին որպես մենակատարներ հանդես են գալիս Գագիկ Տեր-Գաբրիելյանը (Գեղարիկը), Լևոն Խաչատրյանը, Աստղիկ Աբրահամյանը և ուրիշներ[1]։

Համերգի սկզբում ներածական խոսք է ասում Գ. Բուդաղյանը։

Ժառանգելով Սպ. Մելիքյանի խմբավարական արվեստի լավագույն օրինակները, Մ. Մազմանյանը համերգը ղեկավարում է հաջողությամբ։ Հանճարեղ երգահանի գողտրիկ երգերը, խմբի նուրբ և վարպետ կատարմամբ, ուժեղ տպավորություն են թողնում ունկնդիրների վրա։ Համերգին ներկա էին Ա. Սպենդիարյանը, Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսորներ, Հայտնի դաշնակահար Կ. Իգումնովը, Ալ. Ալեքսանդրովը, որը հետագայում դարձավ ՍՍՌՄ Կարմիր Բանակի անսամբլի գեղարվեստական ղեկավար, Կ. Սարաջևը, Սովետական Հայաստանի մշտական լիազոր Ս. Տեր-Գաբրիելյանը, Կուլտուրայի տան դիրեկտոր Դ. Տեր-Սիմոնյանը, Ե. Զարենցը, Ա. Վշտունին, Կ. Հալաբյանը, Միքայել Մազմանյանը և ուրիշներ։

Ե. Զարենցը, հյուրերը և ընկերները ոգևորված

1 Համերգից ստացված եկամուտը տրամադրել են Երևանի Կոնսերվատորիայի գրադարանին։

խոսում էին այն մասին, թե ինչ մեծ տպավորություն էր գործել նրանց վրա անմահ Կոմիտասը։

Ալեքսանդր Սպենդիարյանը, համերգը լսելուց հետո, Մ. Մազմանյանի մասին հետևյալն է գրել. «... Մարտիրոս Մազմանյանը տեսականորեն պատրաստված, շնորհալի, կուլտուրական երաժիշտ է։ Մ. Մազմանյանը մասնագիտությամբ երգեցիկ խմբի դիրիժոր է։ Այս բնագավառում նա օժտված է փորձառությամբ, նշանակալի տեխնիկայով և լավ ճաշակով, որում ես անձամբ համոզվեցի 1924 թվականին Մոսկվայում Հայաստանի Կուլտուրայի տանը կայացած համերգին։

Մ. Մազմանյանն ունի արժեքավոր ծառայություններ և որպես հասարակական գործիչ։ Նա Մոսկվայի հայ երաժշտական խմբակի և նրան կից հրատարակչական կոլեգիայի կազմակերպիչներից մեկն է»։

Երգեցիկ խմբի համերգները, տարբեր ծրագրերով, շարունակում են կազմակերպել Կուլտուրայի տան դահլիճում, միշտ էլ գրավելով բազմաթիվ ունկնդիրների ուշադրությունը։

Այդ տարիներին Մ. Մազմանյանը միաժամանակ ղեկավարում է Մոսկվայի հայկական դրամատիկ ստուդիայի երգեցիկ խումբը և ստուդիայի ուսանողության հետ պարապում երաժշտական գրագիտություն։

Երաժշտական խմբակի օրգան «Կյանք և երա-

ժըշտուԹյուն» ամսագրի առաջին համարում Մ. Մազմանյանը հանդես է գալիս «Մասսայական խմբական երգեցողուԹյուն» վերտառուԹյամբ հոդվածով, որտեղ նա բարձրացնում է մեթոդական հարցեր, առաջ է քաշում ակումբներում աշխատող երաժշտական ղեկավարների միջոցով աշխատավորական լայն մասսաների երաժշտական դաստիարակուԹյան գործը կանոնավորելու, այն պատշաճ մակարդակի վրա դնելու խնդիրը։ Նույն ամսագրում, որպես հավելված, Մ. Մազմանյանը տպագրուԹյան է պատրաստում կոմպոզիտոր Ա. Մայիլյանի Եղիշե Չարենցի տեքստով գրված «Հնչում են օրերը» քառաձայն խմբերգը։

***

1925 թվականին Մ. Մազմանյանը վերադառնում է Թբիլիսի։ Այստեղ նա իր կրթուԹյունը շարունակում է տեղի կոնսերվատորիայի պրոֆեսորներ Ս. Բարխուդարյանի և Մ. Բագրինովսկու մոտ։

Թբիլիսիի միջնակարգ դպրոցներում Մազմանյանը դասավանդում է երգ-երաժշտուԹյուն, աշխատում է Հայարտան երաժշտական սեկցիայում։ Ստեղծում և ղեկավարում է դպրոցական երգեցիկ խմբեր։ Նման խմբերով նա ելույԹներ է ունենում նաև գործարանային ակումբներում, ռադիոյում և այլուր։

Իր ավագ ընկերների տրադիցիայով Մ. Մազմանյանը սկսում է գրել մանկական երգեր, ոչ միայն դասարանական պարապմունքների, այլև երգեցիկ երկձայն խմբերի համար, երգեր, որոնք կարճ ժամանակամիջոցում լայն տարածում են գտնում և հաստատվում դպրոցական ծրագրերում։ Մ. Մազմանյանի դպրոցական երգերը աչքի են ընկնում իրենց վառ մելոդիկ գծով և մատչելիությամբ։ Այդ երգերն էին՝ «Մայիս», «Հնձվորի երգը», «Միլ ու ծաղիկ», «Ձմեռ», «Ձյունիկ» և այլն։

Նրա հորինած խմբակային երգերից տարածում գտան «Ձարկ թմբուկ», «Առաջընթաց թմբկահար», «Կոմերիտական երգ», «Մայիսը մեր» երկձայն երգերը, որոնք գրված են դպրոցական հասակի երեխաների ձայնական-կատարողական հնարավորությունները հաշվի առնելով։ Մազմանյանի դպրոցական երգերը շուտ ընկալվում և սիրվում են երեխաների կողմից։ Այդ երգերից մի քանիսը իր ժամանակ երգվել են Թբիլիսիի համարյա բոլոր հայկական դպրոցներում և երգչախմբերում։

Մ. Մազմանյանը գրել է «Ճուտիկ» օպերան, որի լիբրետոն կազմել է մանկական գրող Հակոբ Աղաբաբի հետ համատեղ։ Օպերան դաստիարակչական բնույթ ուներ, այն պատկերում էր չար ու բարի ուժերի պայքարը, գրված էր պարզ, մանուկներին հասկանալի երաժշտական լեզվով, հաշվի

առնելով նաև նրանց մասնակցությունը օպերայում։

Առաջին անգամ «Ճուտիկ» օպերան (երկու պատկերով) բեմադրվում է Գանձակում (այժմ Կիրովաբադ)՝ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ։ Բեմադրական աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ցուցաբերում կոմպոզիտոր Գուրգեն Միրզոյանը, որն այդ ժամանակ Գանձակի երաժշտական ուսումնարանի դիրեկտորն էր։ Ներկայացումն անցնում է հաջողությամբ և կրկնվում մի քանի անգամ։

Հետագայում Մ. Մազմանյանի «Ճուտիկ» օպերան բեմադրվում է Թբիլիսիում, միջնակարգ դպրոցներում և բանվորական ակումբներում։

«Պրոլետար» թերթը գրում է. ««Ճուտիկ» մանկական օպերան աչքի է ընկնում իր բովանդակության հոգեբանական մեկնաբանությամբ և ուժեղ երաժշտությամբ։ «Ճուտիկ»-ը գրված է հարուստ և համակրելի երաժշտական ձևերով։ Այս իսկ պատճառով կատարվող եղանակները (ինչպիսին են Կատվի երգը, Շան հոխորտանքը և այլն) մեծ ազդեցություն էին ունենում մանուկների վրա։ «Ճուտիկի» երաժշտությունը մանուկ հասարակության համար գրավիչ և ոգևորող է։ Ակոմպանիմենտը սահուն է։

«Ճուտիկի» երաժշտությունը ցույց տվեց, որ Մ.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանի Կուլտուրայի Տան Դահլիճ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14-Ն ՀՈՒՆՎԱՐԻՆ, 1924 Թ.

ՀԱՄԵՐԳ

ՆՎԻՐՎԱԾ

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԿՈՄԻՏԱՍԻ

ՕՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

МОСКОВСКИЙ АРМЯНСКИЙ МУЗЫКАЛЬНЫЙ КРУЖОК

Концертный Зал Дома Культуры С. С. Р Армении

В понедельник 14 января 1924 г.

КОНЦЕРТ

из произведений

К О М И Т А С А

Կոմիտասին նվիրված համերգի ծրագիրը Մոսկվա, 1924 թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

I

Բացման խոսք		Գ. Բուդաղյան
1. ա՝ Ինձ բերեցին յեկավ շաղալուն բ) Սարերի վրով գնաց գ) Ես գիշեր լուսո տեսա		Խումբ
2. ա) Գնել, քելե բ) Կանչե կռունկ		Գ. Գեղարիկ
3. ա՝ Այ այլուղա բ) Հաբրբան	դուետ	Ա. Աբրահամյան Գ. Գեղարիկ
4. ա) Շորորա, անուշ կան բ) Լուսնակին անուշ գ) Առավոտուն բարի լուս		Ա. Բաբայան և խումբ Գ. Գեղարիկ և խումբ

II

5. ա) Կումի առա յելա սարը բ) Գնա, գնա գ) Խումար պառկե		Խումբ Բաբայան և խումբ
6. ա) Ցես սարին կուգայի բ) Սար-սար գ. Գելեր-ցուլեր		Ա. Աբրահամյան
7. ա) Հով արեք, սարեր կան բ) Աշտունեք		Լեվոն Թաշատրյան
8. ա) Հոլ արա յեզո բ՝ Գարուն ա, ձուն ա արել գ Իմ չինարի յարը		Լ. Թաշատր. և խումբ Ա. Աբրահամյան Տ. Բեդրոսյան, Լ. Թաշատրյան և խումբ Ա. Աբրահամյան և խումբ

Խումբը ղեկավարում է ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱԶՄԱՆՑԱՆԻ

Նվագակցում է Գ. ԲՈՒԴԱՂՅԱՆԻ

Ձուտ արդյունքը հանձնվում է Մոսկվայի Ցերժժշտական Խրճքակցության կից կազմակերպված Ցերեվանի կոնսերվատորիայի դրացաբանը լրացնելու ֆոնդին.

ՎԱՐՁԱՊԱՏՈՒՄՆ

ПРОГРАММА

I

Вступительное слово..... Г. Будагян

1. a) Дождик
   b) Прощальная песнь
   c) В эту ночь
   ..... Хор

2. a) Приди, возлюбленный
   b) Журавль
   .. .... Г. Гегарин

3. a) Платочек
   b) Пастораль
   дуэт ..... А. Абрамян и Г. Гегарин

4. a) „Шорора"..... А. Бабаян и хор
   b) Ноктюрн
   c) Свадебная песнь
   ..... Г. Гегарин и хор

II

5. a) Песня любви
   b) Ха, ха, ха
   ..... Хор
   c) Веселая песнь..... А. Бабаян и хор

6. a) С гор
   b) Холмы
   c) Яр
   ..... А. Абрамян

7. a) Вейте ветры
   b) Беспритный
   ..... Л. Хачатурян

8. a) Песня пахаря .... Л. Хачатурян и хор
   b) Весна ..... А. Абрамян, Т. Бедросян, Л. Хачатрян и хор
   c) Мой возлюбленный ..... А. Абрамян и хор

Хор под управлением ВАРТИРОСА МАЗМАНЯН

Партию фортепиано исполнит Г. БУДАГЯН

Весь чистый сбор поступает в фонд, учрежденный при Московском Армянском Музыкальном Кружке, для пополнения библиотеки Эриванской Консерватории

ПРАВЛЕНИЕ

Մազմանյանը համառ աշխատանք է կատարել այդ օպերան գրելիս»[1]։

Մ. Մազմանյանը, մանկավարժական աշխատանքի հետ զուգընթաց, ծավալում է երաժշտական հասարակական լայն աշխատանք, նա ընտրվում է Հայարտան երաժշտական սեկցիայի վարչության անդամ և պատասխանատու քարտուղար։

1928 թվականի հունվարին Թբիլիսիի Հայարտան խորհրդի նախաձեռնությամբ և նրան կից բացվում է երաժշտական արվեստանոց։

Արվեստանոցի նպատակն էր պատրաստել որակյալ երգիչ-երգչուհիներ, կազմակերպել բազմաձայն խառը խումբ, որը մասնակցելու էր Հայարտան երեկույթներին և հանդես էր գալու բանվորական ակումբներում։

Երաժշտական արվեստանոցի երգեցիկ խմբի ղեկավար է նշանակվում Մարտին Մազմանյանը, որը միաժամանակ տարրական տեսության դասեր է անցնում նույն երգեցիկ խմբի երգիչների հետ։

Երգեցիկ խումբը, բաղկացած հիսուն մարդուց, ամենակարճ ժամանակամիջոցում պատրաստում է համերգային ծրագրեր և սկսում իր հրապարա-

---

1 «Պրոլետար», 1928 թ., 28 ապրիլի։

կային հնչյունները Հայաստան դահլիճում, բանվորական ակումբներում, ռադիոյում։ Խումբը մեծ հաջողությամբ մասնակցում է Մաքսիմ Գորկու ծննդյան 60-ամյա և գրական գործունեության 35-ամյա տարեդարձին նվիրված գրական-երաժշտական երեկույթին, կատարելով հեղափոխական, աշխատանքային և ժողովրդական երգեր։

Համերգներից մեկի մասին մամուլում կարդում ենք. «Հայաստան երաժշտանոցի երգեցիկ խումբը, որի 80 տոկոսը կազմված էր բանվորներից, բանվորների որդիներից, Մազմանյանի ղեկավարությամբ շնորհալի կերպով կատարեց աշխատանքային երգեր՝ «Ալագյազ», (Գ. Միրզոյանի), «Հորովել» (Մ. Մազմանյանի), «Սարերի վրով գնաց. (Կոմիտասի), «Льён и Коса» ռուսական ժողովրդական երգը, «Հոկտեմբեր» (Գ. Միրզոյանի) և «Թխկոնդա» (Սպ. Մելիքյանի)։ Խումբը վերջում կատարեց «Ինտերնացիոնալ»-ը, որով և վերջացավ համերգը։

Համերգը շատ լավ տպավորություն թողեց ունկընդիր հասարակության վրա, որը բաղկացած էր երիտասարդ կառուցողներից և նրանց ընտանիքի անդամներից։

Նշենք էլ, որ Մ. Մազմանյանը շնորհալի խմբավար է. ոչ մի ջանք չի խնայել կարճ ժամանա-

կում պատրաստելու և հանդես բերելու բանվորական երգեցիկ խումբը»[1]։

Օրթաճալայի բանվորական ակումբում կայացած համերգի մասին մամուլը գրում է.

«... Համերգի երկրորդ բաժնում երգեցիկ խումբը, Մ. Մազմանյանի ղեկավարությամբ և Հ. Պապաջանյանի նվագակցությամբ, կատարեց մի շարք հայկական և ռուսական խմբական երգեր, որոնցից հիշատակության արժանի են Գ. Միրզոյանի «Ալագյազ», Կոմիտասի «Սարերի վրով գընաց», «Անձրևն եկավ» և Ազատ Մանուկյանի «Կարմիր գարնան»։

Հիշյալ համերգը գովասանքի արժանի է առանձնապես նրանով, որ նրա ծրագիրն ընդգրկում է համարյա բոլոր հայ լավագույն երաժիշտներին և նրանց ստեղծագործությունները»[1]։

1931 թվականի ամռանը «Պրոլետար» թերթը կազմում է մի բրիգադ, որի խնդիրն է լինում շըրջաններում աշխատավորության գեղարվեստական սպասարկումը։

Բրիգադը բաղկացած էր երգեցիկ խմբից ու մենակատարներից։ Նրա ղեկավարներն էին Մ. Մազմանյանը և Է. Կզարթմյանը։

Երգեցիկ խմբում ընդգրկված էին Հայաստանի երաժշտական արվեստանոցի ուսանողները և քա-

1 «Պրոլետար», 1928 թ., 15 մայիսի։

ղաքի մասսայական դպրոցների բարձր դասարանների աշակերտները՝ թվով քառասուն մարդ։ Բրիգադին մասնակցում էին Հովսեփ Տեր-Դավթյանը (դաշնամուր), երգիչներ Նատ. Հովհաննիսյանը և Դավիթ Պողոսյանը։ Էդուարդ Կզարթմյանը միաժամանակ հանդես էր գալիս որպես խմբի մեներգիչ, որը հատկապես լավ էր երգում Կոմիտասի «Կալի երգը» մեներգը։

Գեղարվեստական հարվածային բրիգադը Մ. Մազմանյանի և Էդ. Կզարթմյանի ղեկավարությամբ շրջագայել է Ախալքալաքի, Ախալցխայի և Վրաստանի այլ շրջանները։ Համերգներ են կազմակերպվել կոլտնտեսություններում, գյուղերում՝ բացօթյա, սանատորիաներում, հանգստյան տներում և այլ վայրերում։ Խումբը կատարել է հայկական, վրացական, ադրբեջանական և ռուսական երգեր։ Համերգի բաժիններից մեկը ղեկավարում էր Մ. Մազմանյանը, մյուսը՝ Էդ. Կզարթմյանը։ Համերգներն ամենուրեք արժանանում էին ջերմ ընդունելության։ Այդ համերգների առթիվ «Заря Востока» թերթը գրել է. «...«Պրոլետար» թերթի կողմից առանձնացված գեղարվեստական հարվածային բրիգադը՝ կոմպոզիտորներ Է. Կզարթմյանի և Մ. Մազմանյանի ղեկավարությամբ և դաշնակահար ընկ. Տեր-Դավթյանի մասնակցությամբ, Ախալցխայում և շրջակա գյուղերում կազմակերպեց մի քանի համերգ։ Համերգի ռեպերտուարը

կազմված էր շատ մտածված, ի նկատի ունենալով ունկնդիրներին, կատարում էին ինտերնացիոնալ ժողովրդական, բանվորագյուղացիական լայն մասսաներին հասկանալի երգեր։ Երգեցիկ խումբը կարճ ժամանակամիջոցում գրավեց բանվորական և կոլտնտեսային լայն մասսաների ուշադրությունը»։

1927 թվականի ամռանը Մ. Մազմանյանը հրավիրվում է Երևան, ՀԱՄԽ-ի կուլտբաժնի կողմից բանվորական ակումբների աշխատողների համար կազմակերպված դասընթացներում «Երաժշտությունը բանվորական ակումբներում» թեմայով դասախոսություններ կարդալու։ Նա միաժամանակ պարապում է երգեցիկ խմբերի ղեկավարների հետ՝ անցնելով նոր երգեր, գործնական մեթոդական աշխատանք է տանում նրանց հետ։

1928—1929 ուսումնական տարում Մ. Մազմանյանը աշխատում է Լենինականի Երաժշտական ստուդիայում և Մանկավարժական տեխնիկումում որպես տեսական առարկաների ուսուցիչ, երգեցիկ խմբի ղեկավար և երգ-երաժշտության մեթոդիկայի դասատու։

Մ. Մազմանյանը իրեն հատուկ ջանասիրությամբ գործի լծվեց։ Կարճ ժամանակամիջոցում նրա ղեկավարած երգչախումբը հասավ կատարողական բարձր մակարդակի։

***

1931 թվականին Մարտին Մազմանյանը վերջ-նականապես հաստատվում է Երևանում։

Նա պատրաստվում է պետական քննությանն կոնսերվատորիայի դահլիճն էին հավաքվել դա-սատուներ, ուսանողներ, արվեստագետներ։ Հա-մերգն անցնում է հաջողությամբ։ Հանձնաժողովը (Ս. Մնարյան, Սպ. Մելիքյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Գ. Բուդաղյան, Ա. Մնացականյան, Դ. Լեկկեր) ավարտում է խորհրդակցությունը։ Լսվում է Սպ. Մելիքյանի դուրեկան ձայնը. «Սպասեցե՛ք, ես դեռ գործ ունեմ անելու»։ Եվ նա շեշտակի մոտե-նում է Մազմանյանին, ապտակում նրան, միաժա-մանակ ասելով. «Ա՛ռ քեզ, էս էլ ուստի ապտա-կը...»։ Ներկաների ծափերի տակ նա գրկում է Մազմանյանին և համբուրում ապտակած այտը։ Կոնսերվատորիայի դիրեկտոր Ս. Մնարյանը հայ-տարարում է հանձնաժողովի որոշումը Մ. Մազ-մանյանին ավարտական վկայական տալու մա-սին։

Ընդամենը մի քանի տարի էր, ինչ ռեսպուբլի-կայում սկսվել էին ռադիոհաղորդումները։ Երա-ժըշտական հաղորդումներին մասնակցում էին տե-ղի կարող ուժերը, Պետական կոնսերվատորիայի դասատուներն ու բարձր կուրսի ուսանողները։ Ռադիոյին կից կազմակերպվել էին ժողովրդական

գործիքների անսամբլ և երգեցիկ խումբ։ Անսամբլը ղեկավարում էր Արամ Մերանգուլյանը, իսկ երգչախումբը հանձնարարում են Մարտին Մազմանյանին, որը ղեկավարում է այն շուրջ երեք տարի (1932—1934 թթ.)։ Խումբը բաղկացած էր քաղաքի լավագույն երգիչներից, որոնցից շատերը կոնսերվատորիայի ուսանողներ էին կամ երաժըշտական դպրոցների սոլֆեջիոյի և տեսական առարկաների դասատուներ։ Այդ հանգամանքը հնարավորություն էր տալիս երգչախմբի ռեպերտուարը միշտ թարմացնելու նոր և բազմազան երգերով, որը նպաստում էր ռադիոհաղորդումների ծրագրերը միշտ հետաքրքիր դարձնելուն։ Խումբը աչքի էր ընկնում ինտոնացիայի մաքրությամբ և կայունությամբ։ Այդ գնահատականը հաստատել էին նաև Համամիութենական ռադիոյի մասնագետ ընկերները, որոնք հաղորդումների ժամանակ լսել էին խմբի ելույթները։

Ռադիոյի գեղարվեստական կոլեկտիվների առաջ խնդիր էր դրված առաջին հերթին պատրաստել և ժողովրդականացնել ինչպես հայ կլասիկ, նույնպես և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները։

Ռադիոյի երգեցիկ խումբը յուրացնում է Կոմիտասի, Կարա Մուրզայի, Սպ. Մելիքյանի, Ռ. Մելիքյանի, Գ. Միրզոյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Կ. Զաքարյանի և ուրիշների ստեղծագործություննե-

րը, պարբերաբար ելույթներ է ունենում հայ երաժշտության նվիրված հեղինակային, ցիկլային և թեմատիկ համերգներին, գրական-երաժշտական ու մանկական հաղորդումներին։

Խմբի ռեպերտուարը գնալով հարստանում է ռուսական և եվրոպական կլասիկների, սովետական կոմպոզիտորների խմբերգային գրականությամբ և հեղափոխական մասսայական երգերով։

Ռադիոյի երգեցիկ խումբը իր հարուստ և բազմազան ռեպերտուարով, գեղարվեստական կատարողական բարձր մակարդակով խոշոր դեր է կատարել ռադիոլսողների լայն շրջաններում, երաժշտական դաստիարակության, խմբական արվեստի լավագույն նմուշների ժողովրդականացման գործում։ Ռադիոյի երգեցիկ խմբի կազմակերպումը նպաստեց երգչախմբերի համար գրվող ստեղծագործությունների հարստացմանը։

Այսպիսով, Մ. Մազմանյանն այդ տարիներին մեծ աշխատանք կատարեց ռադիոյի երգեցիկ խմբի հետ, որը հանդիսանում էր մեր ռեսպուբլիկայի երաժշտական լավագույն կոլեկտիվներից մեկը։

***

Ռեսպուբլիկայում լայն ծավալ է ստանում երաժշտական հրատարակչական գործը։ Հայպետ-



Ռադիոյի երգեցիկ խումբը՝ ղեկավարությամբ Մարտին Մազմանյանի, Իրևան, 1932 թ.

հրատի վերակառուցման հետևանքով երաժշտական հրատարակչական բաժինը միաձուլվում է գեղարվեստական բաժնին, որպես նրա ենթաբաժին։ Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ է նշանակվում Եղիշե Չարենցը, որի նախագահությամբ կազմվում է երաժշտական հրատարակչական կոլեգիա։

Ե. Չարենցը, ծանոթ լինելով Մ. Մազմանյանի հետ դեռևս Մոսկվայի Հայաստանի Կուլտուրայի տան համատեղ աշխատանքից, որտեղ Մազմանյանը գլխավորում էր Կուլտուրայի տան երաժշտական խմբակի հրատարակչական կոլեգիայի աշխատանքները և այդ բնագավառում ուներ բավականաչափ փորձ, հրավիրում է Մ. Մազմանյանին աշխատելու Պետհրատի գեղարվեստական բաժնում, երաժշտական հրատարակչության գծով։ Մ. Մազմանյանը սիրով է ընդունում այդ հրավերը։

Արդեն Մոսկվայի Հայաստանի Կուլտուրայի տան երաժշտական խմբակի գործունեության հիմնական բնագավառներից մեկն էլ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների հրատարակման գործն էր, որ նա սկսել էր Ս. Բարխուդարյանի «Նազ պարի» տպագրությամբ։ Հետագայում հրատարակության պատրաստվեցին և լույս տեսան Ս. Բարխուդարյանի դաշնամուրային մինատյուրները, Ա. Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները», Ա.

Տեր-Ղևոնդյանի «Չորս հայկական երգերի» մշակումները, Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» երգերը և այլն։

Առանձին ժողովածուներով տպագրվում են «Նոր կենցաղի երգերը», «Կարմիր բանակային երգերը», «Պիոներական երգերը» և այլ մեներգեր ու խմբերգեր։

Հաշվի առնելով երաժշտական հրատարակության հետ կապված տեխնիկական դժվարությունները, Հայպետհրատը սկզբում երաժշտական երկերը տպագրում էր Մոսկվայում, երաժշտական խմբակի հրատարակչական կոլեգիայի անմիջական օժանդակությամբ։

Երաժշտական սկզբիայի վերակառուցումից հետո պայմանագրեր են կնքվում կոմպոզիտորների հետ բազմաժանր երաժշտական ստեղծագործություններ գրելու համար։ Պետհրատի տպարանին կից Երևանում կազմակերպվում է նոտագրական բաժին, որը սկսում է որակյալ գործեր տալ։ Լույս են տեսնում «Երաժշտությունը մասսաներին» ընդհանուր խորագրով մատենաշարի մասսայական երգեր, «Սովետական էստրադա» մեներգեր, «Ակումբային երգեցիկ խմբերի ռեպերտուար» մատենաշարի հեղափոխական, մասսայական երգեր։

Բացի մասսայական բնույթի ստեղծագործություններից հրատարակվում են մեներգերի և խմբերգերի ժողովածուներ, Ա. Սպենդիարյանի,

Ռ. Մելիքյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ն. Տիգրանյանի ստեղծագործությունները։

Մ. Մազմանյանը կազմում է «Երգարան», որը լայն տարածում է գտնում և վերահրատարակվում։ Երգարանն ուներ հեղափոխական, ժողովրդական, գուսանական երգերի, մեներգերի բաժիններ։ Երգարանում զետեղված էին այն լավագույն երգերի, մեներգերի տեքստերը, որոնք կատարվում էին համերգներին, ռադիոյով և տարածված էին ժողովրդի մեջ։

Երաժշտական խմբագրությունն հաճախ հրավիրվում էին կոմպոզիտորներ Ռ. Մելիքյանը, Ն. Տիգրանյանը, Սպ. Մելիքյանը, Հ. Ստեփանյանը, որոնց հետ ունեցած զրույցների ընթացքում Ե. Չարենցը և Մ. Մազմանյանը առաջ էին քաշում երաժշտական հրատարակությունների հետ կապված մի շարք հրատապ խնդիրներ, ընկերներին մասնակից դարձնում առաջիկա հրատարակչական պլանները կազմելու գործին։

Մեկ օր Չարենցը ոգևորված գալիս է Պետհրատ և հանձնում Մազմանյանին մանկական ձեռագրով՝ գրված մի «Քայլերգ», ասելով՝ «Ծանոթացիր, և եթե հարմար ես գտնում, տպագրիր։ Սա գրել է մի փոքրիկ տղա, որին իմ կարծիքով մեծ ապագա է սպասում»։ Դա վերաբերում էր մեր տաղանդավոր կոմպոզիտոր և դաշնակահար Ահրոն Բաբաջանյանին, որի մանկական առաջին ստեղծագոր-

ծությունը՝ «Քայլերգը», լույս է տեսնում փոքրիկ հնդհնակի լուսանկարով։

Զարենցի ջերմ վերաբերմունքը դեպի հայ երաժշտության ականավոր ներկայացուցիչները, նրա հոգատարությունը նրանց ժառանգության նկատմամբ, երիտասարդ, շնորհալի ստեղծագործողներին ոգևորելու, խրախուսելու միջոցառումները, Մ. Մազմանյանի հետ համատեղ աշխատելու ընթացքում, դրական և մեծ արդյունք տվեցին։

***

1933 թվականին Մ. Մազմանյանը հրավիրվում և մեծ եռանդով աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՌ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում, որպես երաժշտական բաժնի վարիչ։

Այդ օրերին «Ալմաստ»-ով բացվում է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի թատերաշրջանը։ Լուսժողկոմատը սկսում է պայմանագրեր կնքել կոմպոզիտորներ Հ. Ստեփանյանի, Կ. Զաքարյանի, Ք. Կուշնարյանի և ուրիշների հետ՝ օպերաներ և մեծ կտավի սիմֆոնիկ ստեղծագործություններ գրելու համար։

Նախապատրաստվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի վերախմբագրման և բեմադրության հարցը։

Կիրովականում բացվում է ռեսպուբլիկայում

երրորդ երաժշտական դպրոցը, որի դիրեկտոր է նշանակվում Թբիլիսիից հրավիրված կոմպոզիտոր Էդ. Կզարթմյանը։

Պետական կոնսերվատորիային կից կազմակերպվում է երաժշտական գիտահետազոտական կաբինետ, որը Ռ. Մելիքյանի մահվանից հետո կրում է նրա անունը։

Այնուհետև կազմակերպվում են մի շարք դիսպուտներ և խորհրդակցություններ երաժշտական կուլտուրայի տարբեր խնդիրներին նվիրված։

Ռոմանոս Մելիքյանը լուսժողկոմատի հանձնարարությամբ կազմակերպում է էքսպեդիցիա, որի նպատակն էր հավաքագրել և ուսումնասիրել Շամշադինի շրջանի ժողովրդական երգերը։

Որոշվում է Թբիլիսիում անցկացնել Արվեստի անդրկովկասյան առաջին օլիմպիադ։ Այդ օրերին Մազմանյանը ուժ և ջանք չի խնայում լավագույն ձևով մասնակցելու կայանալիք օլիմպիադին։

Ռ. Մելիքյանը, որ օլիմպիադի կազմհանձնաժողովի անդամներից մեկն էր, Թբիլիսիից Մազմանյանին գրում է, թե ի՞նչ է արվում օլիմպիադի համար և թե ի՞նչ խնդիրներ են դրված Հայաստանի արվեստի աշխատողների, մասնավորապես երաժիշտների առաջ։

«...Դուք պետք է մտնեք հայ ժողովրդական ստեղծագործության խորխորատները,— գրում է Ռ. Մելիքյանը,— ինչքան խոր, այնքան ավելի

շատ կգտնեք արժեքավոր գաղձեր, այնքան կխոր-
ացնեք ձեր մեջ մարդ զգալու կարողությունները։

...Պետք է մոբիլիզացնել մեր կարող ուժերը, մեր Միությունը։

...Օլիմպիադը լավ անցկացնելու հարցը պատվո խնդիր է հայ երաժիշտների և Հայաստանի ղեկավարության»։

Ռեսպուբլիկայում ծավալվում է լայն մասսայական աշխատանք։ Շրջաններն են մեկնում կոմպոզիտորներ, արվեստագետներ։ Լինելով կազմհանձնաժողովում Մ. Մազմանյանը հանձնաժողովի մյուս անդամների հետ լծվում է աշխատանքի։ Կազմհանձնաժողովը լուսավորության կոմիսարիատի, ինչպես նաև պարտիական օրգանների անմիջական ղեկավարությամբ մեծ ոգևորությամբ նախապատրաստում են ռեսպուբլիկայի մասնակցությունը անդրկովկասյան օլիմպիադին։

Արվեստի օլիմպիադին մասնակցում են պետական կոնսերվատորիայի երգեցիկ խումբը, ռադիոյի երաժշտական գործիքների անսամբլը, մենակատարներ, ժողովրդական ստեղծագործության և ինքնագործ արվեստի ներկայացուցիչներ։

Այդ օլիմպիադին Հայաստանից մասնակցող արվեստի աշխատողները աչքի ընկան իրենց գեղարվեստական բարձր կատարողականությամբ, նրանցից շատերն արժանացան մրցանակների։

Անդրկովկասյան օլիմպիադը հանդիսացավ

ինչպես մյուս ռեսպուբլիկաների, նույնպես և Սովետական Հայաստանի արվեստի խոշոր մի ցուցադրում, որը մեծ լիցք տվեց մեր ռեսպուբլիկայի երաժշտական կուլտուրայի հետագա զարգացմանը։

***

1936 թվականին Մազմանյանն անցնում է մանկավարժական աշխատանքի։ Նրան այդ բնագավառը միշտ էլ գրավել ու ոգևորել է. այդ է պատճառը մինչև այսօր նրա մեծ սիրով և հոգատարությամբ կատարած աշխատանքը՝ մանկավարժության ասպարեզում։

Սկզբում մի քանի տարի նա աշխատել է Սպենդիարյանի, ապա Զայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում որպես դիրեկտոր և դասատու։

Մ. Մազմանյանը դպրոցներում կազմակերպել է աշակերտական երգեցիկ խմբեր, որոնք բացի դպրոցական հաշվետու համերգներին մասնակցելուց, հաջողությամբ ելույթ են ունեցել ռադիոյի մանկական հաղորդումներին և Հայֆիլհարմոնիայի կողմից կազմակերպված համերգներին։

Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի ստեղծագործական դասարանում Մ. Մազմանյանին աշակերտել և ստեղծագործական առաջին փոր-

ձերն են արել, այժմ անվանի կոմպոզիտորներ, արվեստի վաստակավոր գործիչ Էդգար Հովհաննիսյանը, Ջոն Տեր-Թադևոսյանը և ուրիշներ։

Արվեստի առաջին Անդրկովկասյան օլիմպիադից հետո, ինքնագործունեությունը ու մասնավորապես երաժշտական ինքնագործունեությունը օրըստօրե լայն ծավալ է ստանում ակումբներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, կոլտնտեսություններում կազմակերպվում են երգեցիկ խմբեր, անսամբլներ։ Ռեսպուբլիկայում հաճախ անց են կացվում ստուգատեսներ, որոնք լայն մասսայականություն են վայելում և մեծ հետաքրքրություն առաջացնում ունկնդիրների շրջանում։ 1945 թվականի աշնանը Մոսկվայում մեծ նախապատրաստական աշխատանք է տարվում ինքնագործ արվեստի օլիմպիադ անցկացնելու համար, որին պետք է մասնակցեին բոլոր ռեսպուբլիկաների լավագույն գեղարվեստական կոլեկտիվներն ու անհատ կատարողները։

Վերջին շրջանում ռեսպուբլիկայում իր լավագույն կատարողականությամբ աչքի էր ընկել Երևանի ուսուցիչների տան երգեցիկ խումբը, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի ղեկավարությամբ։ Արվեստի գործերի վարչությունը որոշում է հենց այդ խումբը համարել Համամիութենական օլիմպիադի թեկնածու։

Երգչախմբի ռեպերտուարը հարստացնելու,

կատարողական վարպետությունը բարձրացնելու համար Սպենդիարյանի անվան պետական օպերայից հրավիրվում են գլխավոր խորմեյստեր Վենյամին Անդրևևիչ Նիկոլսկին և Մարտին Մազմանյանը, որը և նշանակվում է խմբի գեղարվեստական ղեկավար։ Վ. Նիկոլսկին որոշ ժամանակից հետո թողնում է աշխատանքը։ Խմբի ղեկավարներն են մնում Մ. Մազմանյանը և Դ. Ղազարյանը։

Երկրորդ անգամն էր, որ Մ. Մազմանյանը պետք է ելույթ ունենար Սովետական Միության մայրաքաղաքի երաժշտասեր հասարկության առաջ։

Առաջին անգամ, երբ նա հանդես եկավ Միության մայրաքաղաքում դեռևս Մոսկվայի պետական կոնսերվատորիայի ուսանող էր, և նրան կարելի էր որոշ զիջումներ անել, սակայն 21 տարի էր անցել այն օրից. այդ ժամանակամիջոցում նա արդեն ձեռք է բերել կոմպոզիտորի և հմուտ խմբավարի համբավ, այս անգամ, իհարկե, հասարակությունն ավելի մեծ պահանջկոտություն էր ցուցաբերելու։

Սկսվում է երգեցիկ խմբի եռուն աշխատանքը, օգտագործվում են նույնիսկ ուսուցիչների ամառային արձակուրդները։

Երգեցիկ խումբը համալրվում է նոր երգիչ-երգչուհիներով և մասնակիցների թիվը հասցվում է

120 մարդու։ Մինչև Մոսկվա մեկնելը, խումբը պատրաստում է Կոմիտասի ստեղծագործությունների յոթ գործ՝ «Գարուն ա», «Կալի երգը», «Քաղհան», «Սիփհանա քաջեր» և այլն, ինչպես նաև մի շարք գործեր՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Սպ. Մելիքյանի, Մ. Մազմանյանի, Ա. Քոչարյանի և Դ. Ղազարյանի ստեղծագործություններից։

Ամենօրյա լարված և ծրագրված պարապմունքները նպաստում են երգչախմբի պրոֆեսիոնալ զարգացմանը։

1945 թվականի սեպտեմբերին Մոսկվայում տեղի է ունենում ինքնագործ երգեցիկ խմբերի օլիմպիադ, որին մասնակցում է նաև Երևանի ուսուցիչների տան երգեցիկ խումբը։

Պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում երգեցիկ խմբի առաջին ելույթից հետո ժյուրիի նախագահ՝ ակադեմիկոս Բ. Վ. Ասաֆիևը բեմից ցած է կանչում Մ. Մազմանյանին, սեղմում է նրա ձեռքը և շնորհակալություն հայտնում լավագույն կատարողականության և հատկապես Կոմիտասի ստեղծագործությունների փայլուն կատարման համար։

Այդ օրվա հաջողությունը գոտեպնդում է ողջ երգչախմբին, որով և ապահովվում է խմբի հետագա հաջողությունը։

Երգեցիկ խմբի բազմաթիվ ելույթների և համերգների ժամանակ ունկնդիրների պահանջով

մի շարք համարներ կրկնվում են։ Առանձնապես ալքի է ընկնում Կոմիտասի «Կալի երգի» կատարումը. մեներգը երգում է Հովհաննես Խաչատրյանը՝ հարազատ մնալով Կոմիտասի ոճին։

Երգեցիկ խումբը Մոսկվայում ելույթներ է ունենում նաև Միությունների Սյունազարդ դահլիճում, Մեծ թատրոնում, գործարաններում և բանվորական ակումբներում։

Մոսկվայի թերթերը մեծ գովասանքով են խոսում Երևանի ուսուցչի տան երգեցիկ խմբի կատարողական արվեստի, նրա բարձր տեխնիկայի, ինտոնացիոն մաքրության, հնչողականության փայլի և նրբության մասին։

«Մեծ ժողովրդի արվեստը» հոդվածում ժյուրիի նախագահ Ա. Վ. Սվեշնիկովը, գրում է. «Սովետական՝ Հայաստանի ինքնագործունեությունը այս ստուգատեսում ներկայացված է Երևանի ուսուցչական երգեցիկ խմբով (ղեկավարներ՝ Մ. Մազմանյան և Դ. Ղազարյան)։ Երգեցիկ խմբի ելույթը շատ լավ տպավորություն գործեց։ Դա կուլտուրական կոլեկտիվ է պրոֆեսիոնալ աստիճանի՝ կատարողական հնարավորություններով օժտված»[1]։

Գ. Պոլյանովսկին «Ժողովրդական երգչախմբեր» հոդվածում, գրում է. «Մեծ հաճույք պատճառեցին ազգային ռեսպուբլիկաների երգչախմբերը։

1 Տե՛ս «Պրավդա», 1945 թ., 8 սեպտեմբերի։

Երևանի հայ ուսուցիչների երգեցիկ խմբի երաժշտականությունը, զուսպ գծերը («Կալի երգը») նույնքան գրավեց ունկնդիրներին, ինչպես և Քութթայիսի վրաց բանվորների տեմպերամենտը»[1]։

Ն. Դեմյանովը «Ժողովրդական արվեստի տոնը» հոդվածում, գրում է. «Գեղեցիկ և մեծ արտահայտչականությամբ և նուրբ նյուանսիրովկայով կատարվեց կոմպոզիտոր Կոմիտասի «Կալի երգը» հայ ուսուցիչների կապելլայի կողմից»[2]։

«Չորրորդ օրը» հոդվածում Բ. Լյուբիմովը, գրում է. «Առաջին հերթին արժանի է նշել Հայաստանի պետական աշխատողների կապելլան։ Երևանի ուսուցիչները իրենց գեղարվեստական ղեկավարներ՝ Մ. Մազմանյանի և Դ. Ղազարյանի օգնությամբ, երգի լավագույն նմուշների բազմազան կատարմամբ կարողացել են հասնել լավագույն արդյունքների։ Առանձին փայլով էր հնչում Կոմիտասի «Կալի երգը», կարելի է ասել, որ դա ստուգատեսի չորս եզրափակիչ համերգների ծրագրերի ամենահաջող համարներից մեկն է։ Հայ ուսուցիչների մոտ նկատվում է լավ շկոլա, համառ աշխատանք յուրաքանչյուր ֆրազի վրա»[3]։

Մոսկվայում ունեցած մեծ ընդունելությունից և հաջողությունից հետո երգեցիկ խումբը Երևանում

---

[1] Տե՛ս «Իզվեստիա», 1945 թ., 9 սեպտեմբերի։

[2] Տե՛ս «Տրուդ», 1945 թ., 7 սեպտեմբերի։

[3] Նույն տեղը, 1945 թ., 2 սեպտեմբերի։

և Հայաստանի տարբեր շրջաններում հանդես է գալիս համերգներով, պահպանելով իր ծրագրում ունեցած գործերի բարձրորակ կատարումը— Կոմիտասի «Կալի երգը», ինչպես և նույն հեղինակի մի շարք այլ ստեղծագործություններ, Կարա-Մուրզայի «Ալագյազ» և «Քեզի մեռնիմ», Սպ. Մելիքյանի «Պիլիբին», Ա. Տեր-Ղևոնդյանի «Կողբայլին», Դ. Ղազարյանի «Հովն անուշ է», նույն հեղինակի «Ուռենին», Մ. Մազմանյանի «Կարմիր վարդ» և «Ջաղջի դռնով», Կ. Զաքարյանի «Մատնուս ակը», Ա. Քոչարյանի «Նախշունաքիրը» և այլն։ Այնուհետև խումբն անընդհատ թարմացնում և հարստացնում է իր ռեպերտուարը սովետական կոմպոզիտորների լավագույն ստեղծագործություններով։

Հետագայում ռեսպուբլիկայում կազմակերպված բոլոր օլիմպիադներին և ստուգատեսներին ուսուցչական երգչախումբը մասնակցում և արժանանում է բարձր գնահատականի։

Բազմաթիվ համերգներով խումբը հանդես է գալիս Օպերային թատրոնում, Հայֆիլհարմոնիայի դահլիճում, Ուսուցիչների տանը, դպրոցներում, Աշտարակում, Էջմիածնում և այլուր։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-րդ տարեդարձի օրերին Երևանում բացվում է ինքնագործ երդեցիկ խմբերի և երգի պարի անսամբլների ռեսպուբլիկական ստուգա-

տես: Ստուգատեսին ելույթ են ունենում Լենինականի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Ումբրշատի, Կիրովականի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Կզարթմյանի, Երևանի Պետական համալսարանի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Կ. Զաքարյանի, Բժշկական ինստիտուտի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Թ. Ալթունյանի, Երևանի ուսուցչական երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Մ. Մազմանյանի:

Ինքնագործ երգեցիկ խմբերի ռեսպուբլիկական ստուգատեսի ժյուրին (նախագահ կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյան) նշում է Պետական համալսարանի, Բժշկական ինստիտուտի, Երևանի ուսուցիչների տան և Լենինականի երգեցիկ խմբերի կատարողական վարպետությունը:

Նոյեմբերին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում սկսվում է Սովետական Հայաստանի արվեստի աշխատողների հոբելյանական համերգների շարքը՝ Սովետական Հայաստանի արվեստի աշխատողների ստեղծագործական հաշվետվությունը:

Առաջին համերգում ելույթ են ունենում ստուգատեսին առաջնություն շահած երգեցիկ խմբերը և երգի-պարի անսամբլները: Այդ համերգին ելույթ է ունենում նաև Երևանի ուսուցչի տան երգեցիկ խումբը՝ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ:

Սովետական Հայաստանի արվեստի աշխա-

տողների ստեղծագործական հաշվետվությունը եզրափակվում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի հոբելյանական սեսիայի համար կազմակերպված մեծ համերգով, որտեղ թացահայտ կերպով երեվում է 25 տարվա ընթացքում ռեսպուբլիկայի ստեղծագործական և կատարողական կադրերի ձեռք բերած նվաճումները։

Ինքնագործ երգեցիկ խմբերից այդ համերգին ելույթ ունենալու պատվին է արժանանում Երևանի ուսուցիչների տան երգեցիկ խումբը։

Մ. Մազմանյանը, միաժամանակ լինելով Երեվանի Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցի երգչախմբի ղեկավար, ուսուցչական երգչախմբին է միացնում դպրոցի տղաների երգչախումբը։ 160 մարդուց բաղկացած խմբով Մ. Մազմանյանը մասնակցում է համերգին, կատարելով մի շարք երգեր, որոնց թվում նաև Կոմիտասի «Սիփանա քաջերը»։ Հանդիսականները բուռն ծափահարություններով են ընդունում երգչախմբի բոլոր կատարումները։

Երգեցիկ խմբերի մասսայական ելույթներ կազմակերպելու նպատակով Արվեստի գործերի վարչության հանձնարարությամբ ժողովրդական ստեղծագործության տան կից 1949 թվականին կազմակերպվում է միացյալ ինքնագործ երգեցիկ խումբ, որտեղ ընդգրկվում են Երևան քաղաքի մի շարք ինքնագործ խմբեր, թվով մոտ 500 մարդ։

խմբի գեղարվեստական ղեկավար է նշանակվում Մ. Մազմանյանը։ Խումբը այդ կազմով ելույթ է ունենում հանդիսավոր համերգներից մեկում, կատարելով մի շարք խմբերգներ։

Մ. Մազմանյանը օպերային թատրոնում մի քանի անգամ ղեկավարել է նաև միացյալ երգեցիկ խմբի ելույթը, որին մասնակցում էին Երևանի, Լենինականի, Կիրովականի և այլ շրջանների ինքնագործ և պրոֆեսիոնալ երգեցիկ խմբերը՝ կատարելով հանդիսավոր համերգի եզրափակիչ համարը։

Այսպիսով իր բազմամյա գործունեության ընթացքում որպես խմբավարի մենք Մ. Մազմանյանին հանդիպում ենք տարբեր շրջաններում և պայմաններում։ Սկսած ծխական դպրոցի աշակերտական խմբից, նա ղեկավարել է մասսայական, երաժշտական դպրոցների, ուսանողական ինքնագործ և պրոֆեսիոնալ երգչախմբերի և դրանց միացյալ ելույթները։ Նրա ղեկավարած երգչախմբերը ելույթներ են ունեցել դպրոցներում, ինստիտուտներում, ակումբներում, գործարաններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, հանգրստի տներում, սանատորիաներում, շրջաններում, ռադիոյում և համերգային դահլիճներում։ Մ. Մազմանյանի ղեկավարած երգչախմբերը միշտ աչքի են ընկել իրենց բարձր կատարողականությամբ և պրոպագանդել են հայ կոմպոզիտորների լավա-



Երևանի ուսուցչական երգեցիկ խումբը համերգի պահին,
դեկավարությամբ՝ Մ. Մազմանյանի:



Երևանի ուսուցչի տան երգեցիկ խումբը, 1950 թ.

դույն ստեղծագործությունները, ժողովրդական երաժշտության բարձրարժեք նմուշների մշակումները, ինչպես նաև սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները։ Տարբեր երգչախմբերով նա բազմաթիվ ելույթներ է ունեցել և համերգներ է տվել Սովետական Միության մի շարք քաղաքներում և շրջաններում՝ Մոսկվայում, Թբիլիսիում, Երևանում, Լենինականում, Կիրովաբադում, Ախալքալակի, Ախալցխայի շրջաններում. ամենուրեք այդ համերգներն անցել են մեծ հաջողությամբ։ Նա այդ աշխատանքը կատարել է սիրով և նվիրվածությամբ, նպատակ ունենալով ցուցադրել լավը, առաջավորը, միշտ աչքի առաջ ունենալով այն, որ երաժշտական երկի հաջողության ամենամեծ գրավականը կատարողն է։ Հենց դրա համար էլ նա համարվում է սովետական շրջանի մեր երգչախմբային արվեստի լավագույն մասնագետներից մեկը։

***

Մ. Մազմանյանի ինքնուրույն ստեղծագործական գործունեությունը նույնպես լայն ծավալ է ստանում։ Նրա գրած մանկական-պատրոցական երգերը, խմբերգերը լայն տարածում ունեցան։ «Ճուտիկ» մանկական օպերան բեմադրվում է հաջողությամբ, գրավելով մանուկ ունկնդիրներին։

Մարտին Մազմանյանը գրում է և իր առաջին մասսայական երգը՝ «Նանի», գրված Հռիփսիմեի տեքստով։ Երգը մեծ ընդունելություն է գտնում և ժողովրդականություն վայելում շնորհիվ իր վառ մելոդիայի և մատչելիության։ Վրաստանի «Սախելգամի» հրատարակչությունը մարտի 8-ի առթիվ տպագրում է երգը հայերեն և ադրբեջաներեն լեզուներով։ «Պրոլետար» թերթը այդ երգի մասին գրում է. «Ողջունելի է Վրաստանի Պետհրատի մարտի 8-ի առթիվ լույս ընծայած երիտասարդ երաժիշտ Մարտիրոս Մազմանյանի «Նանի» մանկերգը, որի նյութը նվիրված է գեղջկուհու ազատագրմանը։ Երգը, որ հյուսված է հայերեն և ադրբեջաներեն տեքստով, գրված է ժողովրդական պարզ լեզվով»։

Ռ. Մելիքյանը, որ արդեն սկսել էր հարինել կենցաղային իր երգերի շարքը, ծանոթանալով Մ. Մազմանյանի երգի հետ, երևանից գրում է նրան. «Գրել բեկուզ էն բանի մասին, թե ինչպիսի դուրեկան հուզում է տիրում ինձ, երբ տեսնում եմ որևէ երաժշտական երկի առաջին հրատարակությունը, և ինչպես մի քանի օր այդ երկը անկախ նրա ծավալից ու բովանդակությունից դառնում է իմ ուշադրության օբյեկտը։ Ձեր հեղինակած «Նանին» (կամ ավելի որոշ «Ա՛յ Նանի») պարուրեց նույն դուրեկան հուզումով։ Գրել էն բանի մասին, թե ինչքան է անհրաժեշտություն ամեն մի արվես-

տագետի համար զգալը և նրբին ուսումնասիրելը իր մայրենի ֆոլկլորը. և ինձ ուրախացնում են ձեր առողջ բնազդները՝ ձգտում դեպի մայրենի սևահողի հյութերը»։

Այդ տարիներին Երևանում մասսայական-էստրադային երգի բնագավառում խոշոր աշխատանք էին կատարում կոմպոզիտորներ Ռ. Մելիքյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Միք. Միրզոյանը և ուրիշներ։ Վայն տարածում էին գտել մասսայական կենցաղային երգերը։

Փոխադրվելով Երևան Մ. Մազմանյանը շարունակում է ստեղծագործական աշխատանքը մասսայական-էստրադային երգի բնագավառում, իր ստեղծագործություններում պատկերելով սոցիալիստական շինարարության առօրյան։ Հրապարակ են գալիս Մ. Մազմանյանի նոր ստեղծագործությունները՝ «Ջան բամբակ», խոսք՝ Ա. Շայբոնի, «Մեր բամբակի արտերը», խոսք՝ Ա. Շայբոնի, «Կոլխոզի աղջիկ», խոսք՝ Ա. Մուրվալյանի, «Երգ կոլտնտեսուհու», խոսք Ա. Մկրտչյանի, «Նկար ուրախ խաղերով», խոսք՝ Դ. Զարխչյանի, «Անուշ հայրենիք», խոսք՝ Դաշտենցի, «Տրակտորի երգը», խոսք՝ Վ. Աղասյանի և այլն։

Օգտվելով ժողովրդական երաժշտության հարուստ ակունքներից, Մ. Մազմանյանի երգերը աչքի են ընկնում գրավիչ մելոդիաներով և անմիջականությամբ։ Նրանք շատ շուտ մասսայականու-

թյուն են վայելում, ուսուցվում են ռադիոյի միջոցով, հաճախ հաղորդվում, կատարվում համերգներում։ Երգերի մեծ մասը լույս է տեսնում «Մասսայական երգեր» մատենաշարով։

Մ. Մազմանյանը գրում է մեծ թվով խմբական երգեր, ժողովրդական երգերի մշակումներ՝ երգչախմբի համար, երգեր՝ նվիրված պարտիային, Հայրենիքին, Կարմիր Բանակին, Մոսկվային և այլն։ Երգերն ընդունվում են երգեցիկ խմբերի, պիոնական երգչախմբի, ռադիոկոմիտեի երգեցիկ խմբի ռեպերտուարներում։ Գրված լինելով երգչախմբային արվեստի առանձնահատկություններին քաջ ծանոթ մարդու կողմից, նրանք մատչելի են դառնում նաև ինքնագործ խմբերի համար և պատահական չէ, որ «Հազար շեփոր» (Գ. Սարյանի), «Հերոսական» (Սարմենի), «Մոսկվա» (Գ. Բորյանի), «Գովք Կարմիր Բանակին» (Հ. Շիրազի), «Երիտասարդական քայլերգ» (Ս. Կապուտիկյանի), ժողովրդական երգերի մշակումներից՝ «Կարմիր վարդ», «Ջաղջի դռնով», «Սարի գյալին», «Հայկո ջան», կատարում են ինչպես պրոֆեսիոնալ, նույնպես և ինքնագործ երգեցիկ խմբերը։ Ուշագրավ են նրա մենակատարները՝ «Գեղչկուհու երգերից», խոսք՝ Վ. Աղասյանի, «Աղջկա երգը», խոսք՝ Ավ. Իսահակյանի, «Քնքուշ հովիկ», խոսք՝ Ավ. Իսահակյանի, «Թևավոր աղջիկ», «Հայրենիք և սեր» խոսք՝ Հ. Շիրազի, որը արժանացել է մրցանակի,

«Երևան» խոսք՝ գուսան Սերոբի, «Ճամփամիջին», խոսք՝ Հենրիկ Թումանյանի, «Այգեպանի աղջիկը», խոսք՝ Սարմենի և այլն։ Հովհաննես Թումանյանի տեքստերի վրա գրված վեց քառյակները՝ «Անց կացա», «Ծտ եկեք», «Աշնան ամպին», «Թասդ բեր», «Լուսը լուսին», «Մի հավք զարկի», որոնք գրված են մեծ հուզականությամբ, նուրբ ճաշակով և իրենց անմիջականությամբ գրավում են ունկնդիրներին։

Այս երգերից շատերը մեր անվանի կատարողներ Գոհար Գասպարյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Շարա Տալյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի, Թամարա Բեժանյանի, Թամարա Շախնազարյանի, Արմինե Թունունջյանի, Եվգինե Խաչիկյանի, Ավագ Պետրոսյանի և հրիտասարդ երգիչների կողմից կատարվել են մեծ հաջողությամբ։

Մ. Մազմանյանի ստեղծագործություններում լայն տեղ են գրավում ժողովրդական և գուսանական երգերի գեղարվեստական մշակումները, որոնք միշտ էլ կատարվել են համերային համերգներին՝ լավագույն կատարողների կողմից։ Այդ երգերից են՝ «Լեզուս չի խոսում», «Էն օր ուրբաթ պըտեր», «Քյոր օղլի», «Հայոց աղջիկներ», «Սիրուհիս», «Սարի Աստղիկ», «Սմեն սազի մեջն գոված», «Մի խոսք ունիմ», «Վրաստանա գյոզալնեը» և ուրիշներ։

Իր երգային ստեղծագործություններով և ժողո-

վըրդական երգերի մշակումով Մ. Մազմանյանը միշտ էլ հատուկ ուշադրության է արժանացել։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-րդ տարեդարձի առթիվ Հայկական ՍՍՌ ժողկոմսովետին կից Արվեստի գործերի վարչության կողմից հայտարարված լավագույն երգերի մրցանակաբաշխությանը Մ. Մազմանյանի «Հայկական քայլերգը» արժանանում է մրցանակի։

Հայ մեծանուն կոմպոզիտոր Կոմիտասի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ ռեսպուբլիկայում հայտարարվում է Կոմիտասի լավագույն պոռտրեի, Կոմիտասի երգերի լավագույն կատարողների և ժողովրդական երգերի լավագույն մշակումների մրցանակաբաշխություն։ Մրցանակի է արժանանում Մ. Մազմանյանի «Հայկո ջան» ժողովրդական երգի մշակումը երգեցիկ խմբի համար և խրախուսանքի արժանանում «Սիրուհիս» ժողովրդական երգի մշակումը։

Սրանով չի սահմանափակվում Մ. Մազմանյանի ստեղծագործությունների ցանկը. նա մի շարք կամերային-գործիքային ստեղծագործությունների հեղինակ է։ Դրանցից են երկու սյուիտ՝ լարային կվարտետի համար, որոնցից մեկը գըրված է Կոմիտասի թեմաներով, «էլեգիա և պար»՝ ջութակի համար, պոեմա կլարնետի համար և այլն։

Լարային կվարտետի առաջին այուիտը կատարվել է 1933 թվականի հունիսի 8-ին հետևյալ կազմով՝ Դ. Լեգկեր՝ ա. ջութակ, Դ. Սողոմոնյան՝ բ. ջութակ, Ա. Կատլյարևսկի՝ ալտ և Կ. Խիղանյան՝ թավջութակ։ Լարային կվարտետի փոքր այուիտը 3 մասից բաղկացած, կատարել է Պետական կոնսերվատորիայի կվարտետը, հետևյալ կազմով՝ Ռ. Ստեփանյան ա. ջութակ, Հ. Գիլանյան՝ բ. ջութակ, Ա. Վարդանյան՝ ալտ. Զ. Շախիջանյան՝ թավջութակ. կվարտետի գեղարվեստական ղեկավարն էր Դ. Լեգկերը։ Հետագայում, տարբեր ժամանակներում, այդ ստեղծագործությունները կատարել են Կոմիտասի և Ա. Սպենդիարյանի անվան կվարտետները։

Սիմֆոնիկ նվագախմբի համար Մ. Մազմանյանը գրել է «Հայկական ժողովրդական պարեր», «Մամեն ու Աշեն» ծրագրային սիմֆոնիկ պոեմը ըստ Սիրասի, որը կատարվել է դիրիժորներ Կ. Սարաջևի և Վ. Փիրադյանի ղեկավարությամբ։

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից սովետահայ կոմպոզիտորներն իրենց ստեղծագործություններում, մասսայական, էստրադային, խմբական երգերում և քայլերգներում արտացոլում են սովետական ժողովրդի պայքարի հերոսականությունն ընդդեմ գերմանական ֆաշիզմի, որը իր արյունոտ թաթն էր բարձրացրել մեր հրկ-

րի ազատության և պատվի վրա, նրա կուլտուրայի և նյութական հարստությունների վրա։

Մ. Մազմանյանը այդ տարիներին գրում է մի շարք երգեր, որոնցից «Զարկեցեք ընկերներ», խոսք՝ Հ. Շիրազի, «Հերոսական», խոսք՝ Սարմենի, «Գովք Կարմիր Բանակին», խոսք՝ Հ. Շիրազի, «Զիլ զարկենք», «Կարմիր այրուձին», խոսք՝ Աղավնու, «Սովետական Բանակին», խոսք՝ Ս. Խանզադյանի և այլն, որոնք կատարվում էին մեծ հաջողությամբ։

Հայրենասիրական թեմատիկան կոմպոզիտորների ստեղծագործություններում ավելի է զարգանում և կոնկրետանում։ Դա իր վառ արտահայտությունն է գտնում նաև նրանց մեծ կտավի աշխատություններում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի 25-րդ տարեդարձի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչության կողմից հայտարարված մրցանակաբաշխությանը Սովետական Հայաստանի կոմպոզիտորները գրում են 14-ից ավելի սիմֆոնիկ գործեր, որոնցից հինգը արժանանում են մրցանակի՝ Գ. Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, Տ. Տեր-Մարտիրոսյանի «Հայրենական պատերազմում ընկած հերոսներին», Մ. Մազմանյանի «Հաղթանակի պոեմը», Կ. Զաքարյանի «Երկիր իմ հայրենի». (սիմֆոնիկ պոեմ-կանտատը, տեքստը՝

Հ. Շիրազի), Ալ. Հարությունյանի «Մեր գործը արդար է»։

Մ. Մազմանյանի «Հաղթանակի պոեմը» նվիրված է պանծալի Սովետական Բանակի պայքարին ու սխրագործություններին։

Պոեմի գլխավոր թեման հաղթանակի թեման է, որն անցնում է ամբողջ օրկեստրի նվագով, և միշտ հիշեցնում է մեր ժողովրդի հաստատուն հավատը հաղթանակի նկատմամբ։ «Հաղթանակի պոեմը» գրված է չերմ շնչով և կոլորիտով։ Այս ստեղծագործության առաջին ցուցադրումը երեվանում կայացավ 1943 թվականի նոյեմբերի 16-ին՝ ղեկավարությամբ դիրիժոր Կ. Սարաջևի։

Մոսկվայում 1944 թվականի հունվարի 29-ին սկսվում է հայկական երաժշտության ցուցադրումը, որի համար Մոսկվա էին մեկնել Հայաստանի արվեստի վարպետները։ Սիմֆոնիկ համերգին ցուցադրվում են սովետահայ կոմպոզիտորների հայրենական պատերազմի շրջանում գրված և մրցանակի արժանացած ստեղծագործությունները։

Համերգի առաջին օրը «Լիտերատուրա ի իսկուստվո» թերթում լույս է տեսնում երաժշտագետ Ա. Շահվերդյանի հոդվածը «Սովետական Հայաստանի երաժշտական արվեստը» վերտառությամբ։

Հոդվածագիրը, համառոտակի կանգ առնելով հայ երաժշտական պատմական անցյալի վրա, ըն-

դարձակ կերպով խոսում է Սովետական Հայաստանի երաժշտական արվեստի նվաճումների ու մասնավորապես Հայրենական պատերազմի տարիներին երաժշտական արվեստի բնագավառում ձեռք բերված նվաճումների մասին։

Խոսելով Գ. Եղիազարյանի, Կ. Զաքարյանի, Մ. Մազմանյանի, Ա. Հարությունյանի աշխատությունների մասին, Ա. Շահվերդյանը գրում է. «Այդ նոր երկերի թեմանները, պատկերները, գեղարվեստական ամբողջ կառուցվածքը զգալիորեն ընդլայնում են ազգային երաժշտության ոճը։ Շարունակելով և զարգացնելով հայ արվեստի հերոսական էպիկական տրադիցիաները»։

Այդ սիմֆոնիկ համերգի առթիվ «Լիտերատուրա ի իսկուստվո» թերթի փետրվարի 5-ի համարում երաժշտագետ Գրոշևան գրում է. «Պատերազմի օրերին Հայաստանի երաժշտական արվեստը շարունակում է աճել ու ամրապնդվել, հարըստացնելով սովետական կուլտուրան»։

Մ. Մազմանյանը զգալի աշխատանք է կատարել նաև դրամատիկ թատրոններում։ Նա մի քանի պիեսների համար գրել է երաժշտություն և երաժշտական ձևավորման է ենթարկել մի շարք ներկայացումներ։ Հիշատակենք մի քանի ներկայացում, որոնց երաժիշտ-ձևավորողը եղել է Մ. Մազմանյանը. «Ջարդ» (Գ. Սունդուկյանի անվան թատրոնում), «Սպիտակ ոսկի», «Մաշինալ» «Բա-

քու-Լոնդոն», «Կրեչինսկու հարսանիքը» (Երևանի Բանվորական թատրոնում)։ «Զարդը» բեմադրել էր Վ. Վաղարշյանը, բոլոր մյուս բեմադրությունների ռեժիսորն էր Լ. Քալանթարը։

Մ. Մազմանյանը Բանվորական թատրոնում աշխատել է նաև որպես երաժշտական մասի վարիչ։

Երևանի տիկնիկային թատրոնում նա ձևավորել է «Չախ-չախ թռչկալորը», «Չկան հրամանով» և ուրիշ ներկայացումներ։

Մ. Մազմանյանի երաժշտական ստեղծագործական աշխարհը բազմաժանր է։ Նրան հետաքրքրքրել է մանկական-դպրոցական երգը և մեծ կտավը՝ երաժշտության մեջ։ Բայց երգն է նրա հիմնական ժանրը, որտեղ նա իրեն դրսևորել է ավելի ցայտուն, ավելի բեղմնավոր։ Նրա երկերի ցանկում մեծ տեղ են գրավում դպրոցական, մասսայական-էստրադային երգերը, ռոմանսներքառյակները, խմբերգերը և այլն։ Նա իր վոկալ ստեղծագործություններով ակտիվ մասնակցել է մեր երկրի կուլտուրական շինարարության գործին. իր երգերով միշտ արձագանքել է բոլոր միջոցառումներին, դրա համար էլ Մ. Մազմանյանի երգերը բազմաժանր են իրենց թեմատիկայով։ Դրանք ջերմ շնչով գրված երգեր են, որոնք աշխատավորական լայն շրջաններում անմիջական ընդունելության են արժանացել և մասսայականություն

վայելել։ Նույնը պետք է ասել նաև նրա խմբերգերի, մեներգերի մասին, որոնք այդ ժանրի երաժշտական գրականության մեջ իրենց արժանի տեղն են գրավում։

Իրենց երաժշտական լեզվի հարազատությամբ և մատչելիությամբ միշտ էլ լավ գնահատականների են արժանացել Մ. Մազմանյանի կամերային և սիմֆոնիկ ստեղծագործությունները, որոնք կատարվել են մեր անվանի կատարողների և կոլեկտիվների կողմից։ Եվ պատահական չէ, որ Մ. Մազմանյանի ստեղծագործություններից շատերը՝ սկսած երգերից մինչև մեծ կտավի ստեղծագործությունները, ռեսպուբլիկական տարբեր կազմակերպությունների կողմից (Արվեստի վարչություն, Կոմպոզիտորների միություն, Ռադիոկոմիտեի և այլն) հայտարարված մրցանակաբաշխություններում շահել են մրցանակներ, հատուկ ուշադրության արժանացել և հրատարակվել։

Մ. Մազմանյանն իր ստեղծագործական աշխատանքով միշտ եղել է մեր կոմպոզիտորների առաջին շարքերում, մասնավորապես երգային ժանրի բնագավառում։

***

Մ. Մազմանյանն իր գործունեության ընթացքում նշանակվել է ղեկավար, պատասխանատու

աշխատանքների։ Նա եղել է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ռադիոինֆորմացիայի և ռադիոհաղորդման կոմիտեի նախագահի տեղակալ՝ գեղարվեստական հաղորդումների գծով և Հայկական Պետական ֆիլհարմոնիայի դիրեկտոր ու գեղարվեստական ղեկավար։ Ունենալով աշխատանքի մեծ փորձ, նա պայքարել է հետաքրքիր, գեղարվեստական բարձր մակարդակով ռադիոհաղորդումների և համերգների համար։ Նա մեծ աշխատանք է տարել հայ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները աշխատավորական լայն շրջաններում ժողովրդականացնելու ուղղությամբ։

Ռադիոկոմիտեում աշխատելու շրջանում Մ. Մազմանյանը վերակառուցման է ենթարկում գործող գեղարվեստական կոլեկտիվները՝ երգեցիկ խումբը, ժողգործիքների անսամբլը և այլն։ Նա կազմակերպում և ղեկավարում է տղամարդկանց ոկալ կվարտետը, որի մեջ էին մտնում երգիչներ Ս. Բարխուդարյանը (առաջին տենոր), Գ. Բաղդասարյանը (երկրորդ տենոր), Ս. Գալստյանը (բարիտոն) և Ս. Շաղիջանյանը (բաս)։ Կարճ ժամանակամիջոցում տղամարդկանց վոկալ կվարտետը ձեռք է բերում մեծ ռեպերտուար և պարբերաբար ելույթներ է ունենում ռադիոյով, հետագայում է՛լ ավելի հարստացնելով իր ռեպերտուարը ռուսական, հայկական ժողովրդական երգերով։

սովետական կոմպոզիտորների ստեղծագործություններով։ Վոկալ կվարտետի ռեպերտուարի մեջ սովետահայ կոմպոզիտորներից տեղ էին գտել Աշոտ Սաթյանի, Մարտին Մաղմանյանի, Վահագն Արարատյանի և ուրիշների ստեղծագործությունները։ Վոկալ կվարտետն իր կատարողական հնարավորություններով, ինտոնացիոն մաքրությամբ, ձայների միաձուլությամբ, գեղարվեստական կատարմամբ, նուրբ նյուանսիրովկայով երաժշտասեր հասարակության ուշադրությանն էր արժանացել։

Վերոհիշյալ բոլոր աշխատանքները Մ. Մազմանյանը կատարել է առանց կտրվելու մանկավարժական գործունեությունից, շարունակելով մնալ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում որպես դասատու։

Ռեսպուբլիկայում երաժշտական ինքնագործունեության բուռն ծաղկման հետ միասին, առաջ է գալիս ինքնագործունեության համար ղեկավար կադրեր պատրաստելու պահանջը։ Ռեսպուբլիկայի ինքնագործ երգեցիկ խմբերը աչքի են ընկնում ոչ միայն ռեսպուբլիկայում, Սովետական Միության սահմաններում, այլև նրանցից դուրս, շահելով միջազգային մրցանակներ։

Ստուգատեսներին, օլիմպիադներին հաջորդում են ինքնագործունեության նոր, մասսայական ձևը՝ երգի տոները, որոնք դառնում են տրադիցիա։

Կիրովականից հետո նույնպիսի տոներ կազմակերպվում են Երևանում, Լենինականում, Ստեփանավանում, Դիլիջանում, որտեղ ամեն անգամ ելույթ են ունենում նոր երգչախմբեր։ Մասսայական դպրոցներում երաժշտությունը պարտադիր է դառնում։

Նշանակվելով Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դիրեկտոր, Մ. Մազմանյանը հատուկ ուշադրություն է դարձնում խմբավարական դասարանի աշխատանքների բարելավմանը։ Այդ բաժնի ընդարձակումը պահանջում էր նաև նոր կադրերի ընդգրկում։ Պետական կոնսերվատորիայի շրջանավարտ խմբավարներով համալրելով բաժինը, նա այդ բաժնի աշխատանքները դնում է բարձր հիմքերի վրա։ Սկզբնական շրջանում Մ. Մազմանյանը դասավանդում է մանկավարժական մեթոդիկա, խմբավարական արվեստ և ղեկավարում է ուսումնարանի երգեցիկ խումբը։ Վերջին տարիներին Մ. Մազմանյանը դասավանդում է միայն խմբավարական արվեստ։

Երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժնի շրջանավարտներից շատերն այժմ աշխատում են դպրոցներում, որպես երաժշտության դասատուներ և խմբավարներ։ Նրանցից մի քանիսը արդեն իրենց ինքնագործ խմբերով հանդես են եկել ռեսպուբլիկական ստուգատեսներին և օլիմպիադներին։

Երեք անցյալում Մ. Մազմանյանը երիտասարդ երգ-երաժշտության գործատուներին, ինքնագործունեության ղեկավարներին օգնելու, օժանդակելու նպատակով հանդես էր գալիս առանձին հոդվածներով և դասախոսություններով, վերջերս նա մանկավարժական և խմբական արվեստի բնագավառում իր ունեցած հարուստ փորձը ամփոփել և հրատարակել է «Երաժշտական դաստիարակության մեթոդիկան մասսայական դպրոցներում» և «Խմբավարական արվեստը» ձեռնարկներում, նպատակ ունենալով օգնել երիտասարդ մանկավարժներին և խմբավարներին՝ բարձրացնելու իրենց ստեղծագործական աշխատանքի որակը[1]։

Երկու ժողովածուներում էլ Մ. Մազմանյանը մատչելի ձևով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում և մեթոդական խորհուրդներ է տալիս երիտասարդ մասնագետներին, նրանց ծանոթացնում հայ կոմպոզիտորների և խմբավարների կյանքին ու գործունեությանը։ Հայաստանում երգչախմբային ընկերության կազմակերպման օրից, լինելով ընկերության փոխ-նախագահ, նա սիրով ու նվիրվածությամբ մասնակցում է ընկերության

---

1 Տե՛ս Մ. Մազմանյան, «Խմբավարական արվեստ», 1961 թ., Հայկական երգչախմբային ընկերության հրատարակություն, «Երաժշտական դաստիարակության մեթոդիկան», 1959 թ., Հայպետհրատ։

միջոցառումներին, որոնք նպաստում են ռեսպուբլիկայում խմբավարական արվեստի զարգացմանը։

Ստեղծագործական-մանկավարժական և վարչական աշխատանքների հետ միասին պետք է նշել Մ. Մազմանյանի ակտիվ գործունեությունը որպես երաժշտական հասարակական աշխատողի։ 1932 թվականից լինելով կոմպոզիտորների միության անդամ, նա երկար ժամանակ հանդիսացել է Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահի տեղակալ և երաժշտական ֆոնդի հայկական բաժանմունքի նախագահ։ Իր գործունեության ընթացքում երաժշտական ամենատարբեր բնագավառներում նա տանում է շնորհակալ և օգտակար աշխատանք։ Սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման գործում նա իր ուրույն տեղն է գրավում որպես կոմպոզիտոր-ստեղծագործող։ Նա մեծ հաջողության է հասել որպես մանկավարժ-մեթոդիստ, երաժիշտ-հասարակական գործիչ։ Նրա գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում խմբավարական աշխատանքը, որը նա կատարում է մեծ սիրով, եռանդով ու ոգևորությամբ։ Այդ են վկայում բոլոր այն գնահատականները, որոնց նա արժանացել է իր բազմամյա գործունեության ընթացքում։

Հաշվի առնելով սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման գործում Մ. Մազմանյանի մատուցած ծառայությունները, Հայկական

ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը 1945 թվականին Մ. Մազմանյանին շնորհել է Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

ՑՈՒՑԱԿ

Մ. ՄԱՂՄԱՆՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԵՐԳԱՀԱՄԲԵՐԻ

Մոսկվայի Հայաստանի Կուլտուրայի տան երաժշտական խմբակների քառաձայն երգեցիկ խումբ
Թբիլիսիի Հայարտան երաժշտական արվեստանոցի քառաձայն երգչախումբ
Թբիլիսիի «Պրոլետար» թերթի հարվածային բրիգադի քառաձայն երգչախումբ
Լենինականի Երաժշտական ստուդիայի երգչախումբ
Լենինականի մանկավարժական ուսումնարանի երգչախումբ
Լենինականի երկաթուղային դպրոցի երգչախումբ
Երևանի ռադիոկոմիտեի երգչախումբ
Երևանի Ոստոցչի տան երգչախումբ
Երևանի ինքնագործ մխիթարյալ երգչախումբ
Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախումբ
Երևանի Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դրպրոցի երգչախումբ
Երևանի Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբ
Թբիլիսիի աշխատանքային մի շարք դպրոցների երգչախմբեր
Թբիլիսիի պրոֆեսիոնալ դպրոցի երգչախումբ

Ց Ա Ն Կ

ՄԱՐՏԻՆ ՄԱՂՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

երգեցիկ խմբերի համար

«Կարմիր վարդ» (ժողովրդական), մշակում՝ քառաձայն խմբի համար (տպագրված)

«Ջաղջի դռնավ (ժողովրդական), մշակում՝ քառաձայն խմբի համար (տպագրված)

«Սարի գյալին» (ժողովրդական), մշակում՝ քառաձայն խմբի համար (տպագրված)

«Մայրիկին յաղման քերին» (ժողովրդական), մշակում՝ քառաձայն խմբի համար)

«Հայկո՛ ջան» (ժողովրդական), մշակում՝ քառաձայն խմբի համար (տպագրված)

«Մոսկվա», խոսք Գուրգեն Բոյանի, երգեցիկ խմբի համար (տպագրված)

«Հերոսական», դաշնամուրի նվագակցությամբ, խոսք՝ Սարմենի (տպագրված)

«Երևտասարդական քայլերդ», խոսք՝ Ս. Կապուտիկյանի (տպագրված)

«Գումք կարմիր Բանակին», խոսք՝ Հ. Շիրազի (տպագրված)

«Զարկեցե՛ք, ընկերներս», խոսք՝ Հ. Շիրազի (տպագրված)

«Կարմիր այրուձին», երգեցիկ խմբի համար, խոսք՝ Ազավնու

«Մոսկուական Բանակին», երկձայն խմբի համար, խոսք՝ Ս. Խանզադյանի

«Զարկ թմբուկ», երկձայն խմբի համար, խոսք՝ Ա. Դուրքանյանի

«Հաղթական Մոսկվա», քառաձայն խմբի համար, խոսք՝ Մ. Մկրտչյանի

«Երգ պարտիայի մասին», քառաձայն խմբի համար

«Ջիլ զարկենք շեփորներ», քառաձայն խմբի համար
«Սովետական Բանակին», քառաձայն խմբի համար, խոսք՝ Սարմենի
«Աստաջընթաց Թմբավահար», երկձայն խմբի համար, խոսք՝ Հ. Կոստանյանի (տպագրված)
«Հազար շիփոր», կանոնատ, խոսք՝ Գ. Սարյանի
«Հորովել», քառաձայն խմբի համար, խոսք՝ Հովհ. Թումանյանի
«Մենք վհաղթենք», երկձայն խմբի համար, խոսք՝ Մ. Մինչիրյանի
«Մայիսը մեր», երկձայն խմբի համար, խոսք՝ Ա. Ղուրբանյանի

երգեր և ռոմանսներ

Ձայնի համար, դաշնամուրի ևվագակցությամբ

Գարունը	խոսք՝ Ա. Թամանյանի
Գարնան հետ	» Գ. Հովհաննիսյանի
Գիղջկուհու երգերից	» Վ. Աղասյանի
Տրակտորի երգը	» »
Վեց քառյակներ	» Հովհ. Թումանյանի
	ա) Անց կացան
	բ) Ես եկանք
	գ) Աշնան ամպին
	դ) Թառդ բեր
	ե) Վոսը լուսին
	զ) Մի հավք զարկի
Աղջկա երգը	խոսք՝ Ավ. Իսահակյանի
Քնքուշ հովիկ	» » »
Ցուրտ է օրը	» » »
Ճամփամիջին	» Հեն. Թումանյանի
Հայրենիքը և սեր	» Հովհ. Շիրազի
Թևավոր աղջիկ	» Սարմենի
Երևան	» Աշոտ Սերոբի

Այգեպանի աղջիկը » Սարմենի
Դավթի սերը » ժողովրդական
Ջուվ քամու դեմ » Մ. Կորյունի
Գերասիմ Յակուբովիչ Զամբախովի խաբելու արիան «խաթաբալա» օպերայից
Քառյակներ խոսք՝ Հովհ. Թումանյանի
ա) Հե՛յ ադահ մարդ
բ) Ով է ձեռքով անում, ո՛վ
Շարմաղ Զարոն խոսք՝ Ավ. Իսահակյանի

Ժողովրդական երգերի մշակում

Զայնի համար, դաշնամուրի նվագակցությամբ

Լեզուս չի խոսում
Էսօր ուրբաթ պիտեր
Մարալի յայլի
Ջյոր օղլի
Հայոց աղջիկներ
ա. Սիրուհիս
բ. Ախ, սիրեկան
գ. Աղջիկ դու սիրուն

Գուսանական երգերի մշակում

Զայնի համար, դաշն. նվագակցությամբ

Սարի աղջիկ Աշուղ Խայաթ
Ամեն սազի մեջըն գոված Սայաթ-Նովա
Մէ խոսք ունիմ Սայաթ-Նովա
Վրաստանա դյոզալները Նաղաշ Հովնաթյան

Մասսայական երգեր

Նանի	խոսք՝ Հովհաննիսի
Ջան բամբակ	» Շայլոնի
Մեր բամբակի արտերը	» »
Վերելք	» Խ. Հրաչյանի
Կոլխոզ աղջիկ	» Ս. Մուրվալյանի
Երգ կոլտնտեսուհու	» Աշոտ Մկրտչյանի
Մրցույթ	» » »
Եկար ուրախ խաղերով	» Դ. Զարխյանի
Անուշ հայրենիք	» Դաշտենցի

Մանկական երգեր

«Ճուտիկ» մանկական օպերա, 2 պատկ., լիբրետ. Հ. Աղաբաբի

Գայլը	խոսք՝ Ս. Ստեփանյանի
Աղվես	» ժողովրդական
Ձմեռ	» Հ. Հայրապետյանի
Ձյունիկ	» Ս. Ստեփանյանի
Մայիս	» Հ. Գյուլխանդարյանի
Մի ու ծաղիկ	» Հենրիկ Թումանյանի
Սագիկ	
Մեղու	
Սիսիկը	
Հնձվորի երգը	» Գ. Մահարու
Կարմիր Բանակը	» Հ. Գյուլխանդարյանի
Կոմերիտական երթ	» Հենրիկ Թումանյանի

Դաստիարակչական նշանակության

Սյուիտա՝ լարային կվարտետի համար (Կոմիտասի թեմաներով)
Էսքիզ՝ լարային կվարտետի համար (Կոմիտասի թեմաներով)
Էլեգիա և պար—ջութակի համար, դաշն. նվագակցությամբ
Պոեմա—վիոլոնչելի համար, դաշն. նվագակցությամբ
«Մամենա և Աշեն»—սիմֆոնիկ պոեմ ըստ Միրաքի
Հաղթանակի պոեմ—սիմֆոնիկ նվագախմբի համար
Հինգ հայկական ժողովրդական պարեր՝ սիմֆոնիկ նվագախմբի համար։

Աբտակ Ասատուրի Տոնիկյան

ՄԱՐՏԻՆ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Հրատ. խմբագիր՝ Բ. Քայլաքյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ասատրյան
Նկարիչ՝ Վ. Մանդակունի
Տեխ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Դ. Փիլոյան

ՎՖ 07580 Պատվեր 753 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 12/V—1962 թ.։
Ստորագրված է տպագրության 22/VI—1962 թ.
Թուղթ՝ 70×92¹/₃₂ հրատ. 2,0 մամ.+3 ներդիր, տպ. 2,25 մամ.=2,63 պայմ. մամ.։
Գինը՝ 13 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի, մինիստրությանհրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։